ՀՀ Շիրակի մարզի Գյումրի
համայնքի ղեկավար
Վ. Սամսոնյանին
քաղաքացի Մկրտիչ Փահլևանյանից
(ք. Գյումրի, Մատնիշյան 157
Հեռ. 094-02-22-40)

Դիմում

Խնդրում եմ GAZ 31105 մակնիշի 04SO045 պ/հ ավտոմեքենայի գույքահարկը, ներառյալ տույժերն ու տուգանքները, չեղարկել, քանի որ 2013թ. փետրվարի 9-ին ավտոմեքենան վթարվել է: Փորձաքննությունների արդյունքում գրանցվել է ավտոմեքենայի 80% և ավելի ոչնչացում (այսինքն վերանորոգումը տեխնիկապես անհնարին է դարձել), այն վերածվել է թափոնի և պետք է խոտանվի:

GAZ 31105 մակնիշի 04SO045 պ/հ տրանսպորտային միջոցը պետական հաշվառումից ժամանակավոր հանված է 2014թ. հունվարի 14-ից (տեղեկանք N 642111): GAZ 31105 մակնիշի 04SO045 պ/հ ավտոմեքենան 2014թ. հունվարի 14-ից մինչև օրս՝ 2024թ. փետրվարի 7, ժամանակավոր հաշվառումից հանված է (տեղեկանք 7/7 14/17060-29):

Դիմումին կից ներկայացնում եմ.

1. Դատական ակտ (վճիռ, որոշում), գործ ԵԱՔԴ 1810/02/13
2. Տեղեկանք N 642111 տրանսպորտային միջոցը պետական հաշվառումից ժամանակավոր հանված լինելու մասին:
3. Տեղեկանք 7/7 14/17060-29 տրանսպորտային միջոցների գրանցված և հաշվառված լինելու վերաբերյալ:
4. Անձնագրի պատճեն:

Դիմող՝ Մ. Փահլևանյան

09. 02. 2024 թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԴԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 09.02.2024թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 2623

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 642111

տրանսպորտային միջոցը պետական հաշվառումից ժամանակավոր հանված լինելու մասին

14-01-2014

կնքման ամսաթիվը

Մակնիշը, տիպարը **GAZ 31105** , Հաշվառման համարանիշը **04 SO 045**,

Հաշվառման վկայագիրը **SG002494** ՏՄ տեսակը **ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ**,

Նույնացման համարը(VIN) **X9631105061318608**, Շարժիչի համարը **53173783**,

Թափքի տեսակը **ՍԵԴԱՆ**, Թափքը համարը **60100709**,

Հենասարքը (ամրաշրջանակի) համարը **61318608**, գույնը **ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՍԻԼՎԵՐ** ,

Թողարկման տարեթիվը **2006**, Հաշվառման կտրոնը **ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՍԻԼՎԵՐ** ,

Հաշվառման ամսաթիվը **29-03-2006**

Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի վկայականը

Հատուկ նշումներ

Տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանվել է 14-01-2014

Հայաստանի
Հանրապետության
կառավարությանն
առընթեր Հայաստանի
Հանրապետության
ոստիկանության
«Ճանապարհային
ոստիկանություն» ծառայության

ԳՅՈՒՄՐԻԻ ՀՔԲ (6)

(ստորաբաժանման անվանումը)

հաշվառման-քննական ստորաբաժանման ղեկավար

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

14/01/2014 Կ.Տ դիմումատուի (լիազորված անձի) ստորագրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ-ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՔՆՆԱԿԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

377500 ՀՀ ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 2/14 հեռ. (060) 83-83-02

«07» 02 2024թ.

№ 7/7 14/17060-24

Ձեր 05.02.2024թ.

քաղաքացի՝ Մկրտիչ Արտաշեսի Փահլևանյանին
(հասցե՝ ՀՀ, ՇՄ, ք. Գյումրի, Մատնիշյան փ., 157 տուն)

Ի պատասխան Ձեր դիմումի տրամադրվում է տեղեկանք **«GAZ 31105»** մակնիշի **04 SO 045** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի վերաբերյալ:

Առդիր՝ «1» թերթ:

Հարգանքով՝

/ պետ,

ոստիկանության փոխգնդապետ **Ա. Ռ. Մովսեսյան**

Կատ.՝ Ա. Մամյան

№ 2

Նշանակվել է դատաքննություն

Դատաքննության ամսաթիվ:	02-05-2016
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-04-2016
Ժամ:	17:20
Նիստերի դահլիճի համար:	3
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Նիստը:	Կայացվել է
	Պատճառը:
	Այլ նշումներ:

Հայցի/հակընդդեմ հայցի լուծումը

Հայցի լուծման ամսաթիվ:	02-05-2016
Հայցի լուծումը:	Բավարարվել է մասնակի

Հոդված

Հոդված	130-131-134
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
	Այլ նշումներ:
Օրենսգիրք:	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Դատական ակտ

Դատական ակտ (վճիռ, որոշում): Գործ ԵԱՔԴ 1810/02/13

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

02.05.2016թ. ք.Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը՝
նախագահությամբ դատավոր՝ Ս.Հովսեփյանի
քարտուղարությամբ՝ Ս.Արտաշեսյանի

մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Ա.Սարգսյանի
պատասխանող
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի Ս.Մարաբյանի
Ռազմիկ Խաչատրյանի
ներկայացուցիչ՝ Ս.Մաղաթյանի
«ԱՐ ՎԻ ԷՄ» Քոնսալտ» ՍՊԸ-ի
ներկայացուցիչ՝ Հ.Հովսեփյանի

Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Մկրտիչ Փահլևանյանի ընդդեմ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի, «ԱՐ ՎԻ ԷՄ» Քոնսալտ» ՍՊԸ-ի, Ռազմիկ Խաչատրյանի՝ «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի թիվ Հ 054 կրկնակի փորձաքննության արդյունքները անվավեր ճանաչելու, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ 01.06.2013թ. SH 31023-A2 որոշումը մասնակի՝ Հայցվորին պատճառված վնասի չափի մասով անվավեր ճանաչելու, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին ապահովագրավճարի հաշվարկը ավտոմեքենային պատճառված իրական վնասի՝ համամասնությամբ կատարելուն պարտավորեցնելու, Ռազմիկ Խաչատրյանից գումար բռնագանձելու պահանջների վերաբերյալ

Պ Ա Ր Զ Ե Ց

I

1. Գործի դատավարական նախապատմությունը.
Հայցվորի ներկայացուցիչը, 30.07.2013թ. դիմելով դատարան ընդդեմ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի, «Հայաստանի Ապահովագրական Բյուրո» ԻԱՄ-ի, «ԱՐ ՎԻ ԷՄ» Քոնսալտ» ՍՊԸ-ի փորձագետ Դ. Ռսյանի, երրորդ անձ Ռազմիկ Խաչատրյանի՝ «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ փորձագետ Դ.Ռսյանի կողմից կատարված Հ 054 կրկնակի փորձաքննության արդյունքները անվավեր ճանաչելու, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ 01.06.2013թ. SH 31023-A2 որոշումը մասնակի՝ Հայցվորին պատճառված վնասի չափի մասով անվավեր ճանաչելու, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին ապահովագրավճարի հաշվարկը ավտոմեքենային պատճառված իրական վնասի՝ 1.938.000 ՀՀ դրամի համամասնությամբ կատարելուն պարտավորեցնելու պահանջի վերաբերյալ:
Դատարանի /դատավոր Ա.Հունանյան/ 02.08.2013թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
14.08.2013թ. հայցվորը կրկին ներկայացրել է նշված հայցադիմումը:
Դատարանի /դատավոր Ս.Հովսեփյան/ 14.08.2013թ. որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձվել է:
Հայցվորը կրկին ներկայացրել է նշված հայցադիմումը:
04.09.2013 թվականին դատարանի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և դատական նիստը նշանակվել է 22.10.2013 թվականին:
21.10.2013թ. «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմումի վերաբերյալ գրավոր պատասխան է ներկայացրել:
22.10.2013թ. Ռազմիկ Խաչատրյանի ներկայացուցիչը հայցադիմումի վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացրել
01.11.2013թ. «Հայաստանի Ապահովագրական Բյուրո» ԻԱՄ-ի ներկայացուցիչը հայցադիմումի վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացրել
14.11.2013թ. «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչները հայցադիմումի վերաբերյալ գրավոր առարկություն են ներկայացրել:
Դատարանի 14.11.2013թ. արձանագրային որոշմամբ «Հայաստանի Ապահովագրական Բյուրո» ԻԱՄ-ը պատասխանող չի ճանաչվել, իսկ «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ն ճանաչվել է երրորդ անձ:
11.02.2013թ. հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումի լրացում է ներկայացրել դատարան:
Դատարանի 21.03.2014թ. որոշմամբ նշանակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն:
Դատարանի 09.10.2014թ. որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է, և դատական նիստը նշանակվել է 05.11.2014թ.:
Դատարանի 11.11.2014թ. որոշմամբ նշանակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն:
Դատարանի 15.04.2015թ. որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է, և դատական նիստը նշանակվել է 17.06.2015թ.:
25.06.2015թ. հայցվորի ներկայացուցիչը հայցի հիմքի, առարկայի և լրացման վերաբերյալ դիմում է ներկայացրել, որով պատասխանողներ է ճանաչել «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ին, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին, և Ռազմիկ Խաչատրյանին, խնդրել է երրորդ անձ Ռազմիկ Խաչատրյանին ճանաչել պատասխանող, խնդրել է Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացությամբ ամրագրված արդյունքները մասնակի ճանաչել անարժանահավատ և անհիմն, կամ անվավեր, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ 01.06.2013թ. SH 31023-A2 որոշումը մասնակի ճանաչել անվավերն /կամ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին պարտավորեցնել ապահովագրական պատահարի հետևանքով «Գազ 31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենայի մինչ պատահարը գնահատված և մնացորդային արժեքների տարբերության՝ 1.229.000 ՀՀ դրամ համամասնության չափով հատուցել Մկրտիչ Փահլևանյանին վճարման ենթակա գումարը: Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել պատճառած վնասի փաստացի չափի և ապահովագրական հատուցման միջև եղած տարբերությունը՝401.772 ՀՀ դրամ: Պատասխանողներ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի և Ռազմիկ Խաչատրյանի կողմից վնասի հատուցման չվճարված գումարների նկատմամբ 2013թ. հունիսի 1-ից հաշվեգրել տոկոսներ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների չափով՝ մինչև գումարները վճարելու օրը և այն բռնագանձել հօգուտ հայցվոր Մկրտիչ Փահլևանյանի, պատասխանողներից հօգուտ վերջինիս բռնագանձել նրա կողմից խախտված իրավունքները վերականգնելու համար կատարած ծախսերը՝ կրկնակի փորձաքննության, Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԴ ՍՊԸ-ին արդեն իսկ վճարված և

հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումարները:
14.12.2015թ. Ռազմիկ Խաչատրյանի ներկայացուցիչը հայցադիմումի վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացրել:

2. Հայցվորի դիրքորոշումը.
Հայցվորի ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ 19.03.2006թ. «Կարկոմավտո» ՍՊԸ-ից հայցվորը գնել է «Գազ-31105» մակնիշի ավտոմեքենա՝ վճարելով 4.135.000 ՀՀ դրամ: Ավտոմեքենային տրվել է 04 SO 045 պետհամարանիշը: 21.02.2013թ. «Ռոսգոսստրախ» ԱՓԲԸ-ի հետ կնքել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր՝ վկայագիր SG 0547958: Ապահովագրության ժամկետի ավարտը սահմանվել է 21.01.2014թ.: Պայմանագրի 8-րդ կետով գույքին պատճառված վնասների համար սահմանվել է 1.800.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար: 2013թ. փետրվարի 9-ին ժամը 09:00-ի սահմաններում Ռազմիկ Խաչատրյանն իր վարած «Զիլ Մազ» մակնիշի 19 OS 057 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, Երևան-Գյումրի ավտոճանապարհի 70-րդ կմ հատվածում, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, ստեղծելով վթարային իրադրություն, իր վարած ավտոմեքենայով դուրս գալով հանդիպակաց ուղեմաս, բախվել է Հայցվորի վարած ավտոմեքենային, կատարել ավտովթար, որի հետևանքով Հայցվորին պատկանող «Գազ 31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենային և մեկ այլ ավտոմեքենայի ևս պատճառել է նյութական վնաս: Ապահովագրական պատահարի հետևանքով Ավտոմեքենային պատճառված վնասը «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի սկզբնական փորձաքննության արդյունքում գնահատվել է 1.138.000ՀՀ դրամ:
Հայցվորի պահանջով և 25.000 ՀՀ դրամ վճարով, Փորձագետի 17.05.2013թ. կատարած Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացությամբ, Ավտոմեքենային պատճառված վնասի չափն արժեքային արտահայտությամբ, շուկայական գներով կարող է կազմել 1.195.000 ՀՀ դրամ:
ԱՓԲԸ-ն 01.06.2013թ. կայացրել է թիվ SH 31023-A1 և թիվ SH 31023-A2 որոշումները, որոնց համաձայն Ավտոմեքենային պատճառված վնասի մեծությունը կազմում է 1.195.500 ՀՀ դրամ, և հաշվի առնելով, որ նույն պատահարի հետևանքով ավտոմեքենային պատճառված վնասի մեծությունը կազմել է 1.144.000 ՀՀ դրամ, ապահովագրական 1.800.000 ՀՀ դրամ գումարից Ավտոմեքենային պատճառված վնասի համամասնությամբ Հայցվորին հատուցման ենթակա գումարը կազմել է 815.268 ՀՀ դրամ:
Իր գույքի իրական արժեքը և պատճառված վնասը ճշտելու համար Հայցվորը դիմել է «Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ին, որի կողմից տրված 07.06.2013թ. թիվ Ա115 եզրակացության համաձայն՝ Ավտոմեքենայի շուկայական արժեքը մինչև վթարը կազմել է 2.200.000 ՀՀ դրամ, իսկ պատճառված նյութական վնասը՝ 1.936.000 ՀՀ դրամ: Հայցվորը «Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ին մասնագիտական եզրակացության համար վճարել է ևս 30.000 ՀՀ դրամ:
Սույն գործով հայցադիմումը ներկայացնելու համար Հայցվորը նախապես վճարել է 42760 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:
Փորձագետի Հ 054 կրկնակի փորձաքննության արդյունքների արժանահավատության և մասնագիտական մի շարք այլ հարցերի պարզաբանման նպատակով Հայցվորի ներկայացուցչի միջնորդությամբ Դատարանի կողմից նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության 07.04.2015թ. Հմ՝52171410 եզրակացության համաձայն, Ավտոմեքենայի վնասի չափն արժեքային արտահայտությամբ, 2013թ. փետրվարի 9-ի դրությամբ գործող շուկայական գներով կարող էր կազմել 1.229.600ՀՀ դրամ:
Այսինքն, պատահարի հետևանքով ավտոմեքենաներին պատճառված ընդհանուր /1.229.600+1.444.000=2.673.600/ 2.673.600 ՀՀ դրամ վնասների համամասնությամբ, ԱՓԲԸ կողմից ապահովագրական 1.800.000 ՀՀ դրամ գումարից Հայցվորին հատուցման ենթակա գումարը կկազմի՝ /1.229.600: 2.673.600*1.800.000= 827.828/ 827.828 ՀՀ դրամ:
Կրկնակի փորձաքննությունն իրականացնելիս և գույքին պատճառված վնասները գնահատելիս Փորձագետը չի պահպանել, չի կատարել և խախտել է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին ՀՀ օրենքի և Բյուրոյի խորհրդի՝ Օրենքի հիման վրա ընդունած՝ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների գնահատման և փորձաքննության կարգն ու մեթոդաբանությունն:
Թեև կրկնակի փորձաքննության Հ 054 եզրակացության համաձայն՝ գնահատման գործընթացը բաղկացած է եղել հետևյալ փուլերից՝ վթարի ենթարկված ավտոմեքենայի

մասնագիտական տեսողական զննում, անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում մասնագետների հետ, հարցազրույցների միջոցով ավտոպահեստամասերի շուկայի ուսումնասիրում, գնահատմանը ներկայացված ավտոմեքենայի փաստաթղթերի ուսումնասիրում, գնահատմանն անհրաժեշտ մեթոդների կիրառումը և եզրակացության կազմումը, սակայն Փորձագետը նախնական դատական նիստի ընթացքում տված բացատրությամբ հայտնել և ընդունել է, որ վթարված ավտոմեքենան անձամբ չի տեսել, չի զննել, վնասված գույքի փորձաքննության համար Ձև 9-ով սահմանված ձևի զննության ակտ չի կազմել, չի լուսանկարահանել: Կրկնակի փորձաքննությունը կատարելու համար օգտվել է ոմն Արայի կողմից կատարված ավտոմեքենայի լուսանկարներից: Ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը, ավտոմեքենայի վազքի վերաբերյալ նախորդ փաստաթղթերին ծանոթ չէ, և դրանք, այդ թվում ավտոմեքենայի վազքի տվյալները որևէ նշանակություն չեն կարող ունենալ վթարի հետևանքով ավտոմեքենային հասցված վնասի գնահատման արժեքի հաշվարկի կատարման համար:
Իսկ Փորձագետը նշել է, թե... ավտոմեքենան ենթարկվել է մանրակրկիտ տեսողական զննության, այն գտնվել է մինչվնասվածքային բավարար ապրանքային վիճակում: Ակնհայտ է, որ միայն իր կողմից անձամբ կատարված անմիջական տեսողական զննությամբ Փորձագետը կարող էր ավտոմեքենային պատճառված իրական վնասի պարզաբանման հարցում կարևորագույն նշանակություն ունեցող՝ ավտոմեքենայի ապրանքային վիճակի մասին, նման եզրահանգման հանգել,որն էլ չի համապատասխանում իրականությանն այնքանով, որ Հայցվորի ավտոմեքենան, որպես անձնական օգտագործման ավտոմեքենա, գտնվել է գերազանց վիճակում: Ըստ Փորձագետի, ավտոմեքենայի ... վազքն զննության պահին՝17.05.2013թ. կազմել էր 251.719 կմ: Փորձագետի եզրակացությունում վթարված ավտոմեքենայի վազքն, որով բնութագրվում է մեքենայի փաստացի շահագործման աստիճանը՝ ավտոմեքենայի մաշվածությունը, տեխնիկական վիճակը, ինչպես նաև մինչվթարային ապրանքային վիճակը, իրականից շուրջ 50.000 կմ ավելին է արձանագրվել: Փորձագետը թեև նշել է, որ վերոհիշյալ վնասվածքներով ավտոմեքենայի վնասի չափն արժեքային արտահայտությամբ, որոշվում է ավտոմեքենայի մինչև վնասվելն ունեցած գնի և առկա՝ վթարված վիճակում/ որպես պիտանի մնացած պահեստամասեր/ ունեցած գների տարբերությամբ՝ նկատի ունենալով ավտոմեքենայի տեխնիկական վիճակը, մաշվածությունը, ինչպես նաև մինչվթարային ապրանքային վիճակը, սակայն ի հակառակ նույնիսկ իր իսկ եզրակացությամբ մեջ նշված այդ հետևությանը, ի վերջո ավտոմեքենային հասցված վնասի գնահատման արժեքի հաշվարկը կատարել է 17.05.2013թ. դրությամբ, նշելով որ այդ կերպ հաշվարկի կատարումը ճիշտ է և օրինական: Այսպիսով, ակնհայտ է, որ Փորձագետի կողմից Հ 054 կրկնակի փորձաքննությունը կատարվել է Օրենքի և Բյուրոյի վերոգրյալ կանոնների կոպիտ խախտումներով, եզրակացության մեջ առկա են ակնհայտ հակասական դատողություններ և եզրահանգումներ, հետևաբար նրա արդյունքներն ենթակա են բողոքարկման և անարժանահավատ կամ անհիմն ճանաչելու, հետևաբար և, այն չէր կարող հիմք հանդիսանալ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին ապահովագրական ընկերության (Բյուրոյի) գրավոր որոշման համար, հետևաբար չի կարող դրվել նաև դատարանի վճռի հիմքում: Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ եթե ապահովադիրը, ապահովագրված անձը, տուժողը (նրա իրավահաջորդը) կամ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) համաձայն չէ սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված կարգով անցկացված փորձաքննության արդյունքներին, ապա նա սույն հոդվածի համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ մասով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունի պահանջելու կրկնակի փորձաքննության անցկացում: Կրկնակի փորձաքննությունն անցկացվում է այն անցկացնելու պահանջ ներկայացրած անձի միջոցների հաշվին: Կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացվելու դեպքում կրկնակի փորձաքննություն նշանակելու և փորձագետ նշանակելու մասին որոշումն ընդունում է Բյուրոն՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդորում, սույն մասով նախատեսված փորձագետը չպետք է փոխկապակցված լինի ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և ապահովագրական ընկերության (Բյուրոյի) հետ: Կրկնակի փորձաքննության անցկացումից հետո լրացուցիչ փորձաքննություն նշանակվել չի կարող, և կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: ՀՀ վերաքննիչ դատարանը 19.03.2015թ. օրինական ուժի մեջ մտած որոշմամբ, մեկնաբանելով նշված նորմը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, արձանագրել է հետևյալը.

իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները, պարզ է դառնում, որ օրենսդիրը հստակ նախատեսել է կրկնակի փորձաքննության եզրակացության դատական կարգով բողոքարկման հնարավորություն: Այսինքն՝ նշված եզրակացությունը վիճարկելու իրավունքը հստակ սահմանված է օրենքով, որպիսի պայմաններում անհիմն են Դատարանի այն եզրահանգումները, ըստ որի՝ փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա չէ դատարանում քննության: Նշված հիմքով կարճելով սույն գործի վարույթը՝ Դատարանն, ըստ էության, սահմանափակել է հայցվորի՝ դատարան դիմելու իրավունքը, այդպիսով խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանությունից օգտվելու իրավունքը, այն դեպքում, երբ կրկնակի փորձաքննության արդյունքները դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը սահմանված է օրենքով: Արդյունքում՝ Դատարանն անտեսել է նաև սույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 09.10.2013 թվականին և 12.05.2014 թվականին կայացված որոշումներով արտահայտած դիրքորոշումն առ այն, որ օրենսդիրը հստակ նախատեսել է կրկնակի փորձաքննության եզրակացության դատական կարգով բողոքարկման հնարավորություն, որից և սույն դեպքում օգտվել է հայցվորը:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցը ենթակա է դատարանում քննության՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը, որպիսի պայմաններում բողոքարկվող դատական ակտ ընենթակա է բեկանման, իսկ գործը, ըստ էության նոր քննության ուղարկման / ԱՓԲԸ որոշումների բողոքարկման հնարավորության վերաբերյալ տես ԵԿԴ/2017/02/11 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը/:

ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի համաձայն՝բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև: Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝օրենքի մեկնաբանությունները):

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ն մասի 2-րդ ենթակետի, 2-րդ և 6-րդ մասի համաձայն՝ եթե սույն օրենքի համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Տուժողի փաստացի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար լինելու դեպքում, ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը հատուցում է վնաս պատճառողը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1066-րդ հոդվածի համաձայն, ըստ որի՝ կամավոր կամ պարտադիր ապահովագրության կարգով հօգուտ տուժողի իր պատասխանատվությունն ապահովագրած քաղաքացին կամ իրավաբանական անձը, այն դեպքում, երբ պատճառված վնասը լրիվ հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար է, հատուցում է ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը:

Նկատի ունենալով, որ Հայցվորի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար է, հետևաբար ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը հատուցելու համար պետք է սույն գործով որպես պատասխանող ներգրավել նաև վնաս պատճառողին՝ Ռազմիկ Նորիկի Խաչատրյանին. պատահարի հետևանքով պատճառված ընդհանուր /1.229.600+ 1.444.000=2.673.600/ 2.673.600 ՀՀ դրամ վնասների համամասնությամբ, ԱՓԲԸ կողմից ապահովագրական 1.800.000 ՀՀ դրամ գումարից Հայցվորին հատուցման ենթակա

գումարը կկազմի՝ /1.229.600 : 2.673.600*1.800.000=827.828/ 827.828ՀՀ դրամ, հետևաբար Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանը պետք է Հայցվորին հատուցի նրան պատճառած վնասի փաստացի չափի և ապահովագրական հատուցման միջև եղած տարբերությունը /1.229.600 -827.828 = 401.772/, այն է 401.772 ՀՀ դրամ:
Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանը չի վիճարկել ԱՓԲԸ-ի 01.06.2013թ. թիվ SH 31023-A1 և թիվ SH 31023-A 2 որոշումները և մինչ օրս չի հատուցել Հայցվորին նշված գումարը:
Օրենսգրքի 10-11 և 13-14 հոդվածների համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ ...6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով...: Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ: Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ ... 10) վնասներ հատուցելով...13) օրենքով նախատեսված այլ եղանակներով:
Օրենսգրքի 17 և 1058 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Այսպիսով ակնհայտ է, որ ապահովագրական հատուցման սույն գործընթացում Ավտոմեքենայի սեփականատերն իր խախտված իրավունքները վերականգնելու՝ վթարի հետևանքով իրեն պատճառված նյութականիրական վնասի չափը պարզելու և համապատասխան հատուցում ստանալու համար հարկադրված է եղել կատարել վերոգրյալ ծախսերը, որոնք Օրենսգրքի 17 և 1058 հոդվածների, ինչպես նաև նույն օրենսգրքի 10 և 14 հոդվածների դրույթներ համաձայն, ենթակա են հատուցման որպես Հայցվորին պատճառված իրական վնաս:
Օրենսգրքի 411 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2 և 68 հոդվածների համաձայն շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:
Վերոգրյալների հիման վրա խնդրեց Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացությամբ ամրագրված արդյունքները մասնակի ճանաչել անարժանահավատ և անհիմն, կամ անվավեր, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն 01.06.2013թ. SH 31023-A2 որոշումը մասնակի ճանաչել անվավեր և /կամ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին պարտավորեցնել ապահովագրական պատահարի հետևանքով «Գազ 31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենայի մինչ պատահարը գնահատված և մնացորդային արժեքների տարբերության՝ 1.229.000 ՀՀ դրամ համամասնության չափով հատուցել

Մկրտիչ Փահլևանյանին վճարման ենթակա գումարը: Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել պատճառած վնասի փաստացի չափի և ապահովագրական հատուցման միջև եղած տարբերությունը՝ 401.772 ՀՀ դրամ: Պատասխանողներ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի և Ռազմիկ Խաչատրյանի կողմից վնասի հատուցման չվճարված գումարների նկատմամբ 2013թ. հունիսի 1-ից հաշվեգրել տոկոսներ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների չափով՝ մինչև գումարները վճարելու օրը և այն բռնագանձել հօգուտ հայցվոր Մկրտիչ Փահլևանյանի, հօգուտ վերջինիս, իր կողմից խախտված իրավունքները վերականգնելու համար կատարած ծախսերը՝ կրկնակի փորձաքննության, Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԴ ՍՊԸ-ին արդեն իսկ վճարված և հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումարները, գանձել պատասխանողներից:

3. Պատասխանողների դիրքորոշումը.

Պատասխանող «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի ներկայացուցիչը հայցի դեմ առարկեց և դատարանին հայտնեց, որ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի և Ռազմիկ Խաչատրյանի միջև 09.01.2013թ. կնքվել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր պահովագրության թիվ SH468362 վկայագիրը, որով ապահովագրվել է «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: 09.02.2013թ. ժամը 09:00-ի սահմաններում, Երևան-Գյումրի ավտոճանապարհի 70-րդ կմ հատվածի՝ դեպի Երևան տանող ուղեմասում միմյանց են բախվել Ռազմիկ Խաչատրյանի վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի, Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի և Անդրանիկ Արտոյանի վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենաները: Դեպքի կապակցությամբ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզի քննչական բաժնում նախապատրաստված նյութերի և նշանակված դատաավտոտեխնիկական փորձաքննության արդյունքների հիման վրա 01.03.2013թ. ընդունված քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ հիմնավորվել է, որ Ռազմիկ Խաչատրյանը իր վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայով երթևեկելիս, թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և ընդհարվել է հանդիպակաց երթևեկող Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն: Վթարից հետո նույն պահին Գյումրիի կողմից դեպի Երևանի ուղղությամբ երթևեկող Անդրանիկ Արտոյանը, իր վարած .Mitsubishiե մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայով, չունենալով վթարը կանխելու տեխնիկական հնարավորություն, բախվել է ճանապարհի՝ դեպի Երևան տանող ուղեմասում գտնվող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենային: Դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 06051308 եզրակացության համաձայն՝ առաջադրված պայմաններում «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդ Ռազմիկ Խաչատրյանը, թույլ տալով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, դրանով իսկ պայմանավորել է Դեպքի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից: Դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 06051308 եզրակացության համաձայն՝ առաջադրված պայմաններում «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի և «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդները «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարումը /Դեպքը/ կանխելու տխնիկական հնարավորություն չեն ունեցել և նրանց կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որոնք, տեխնիկական տեսակետից հակասելով ՃԵԿ-ի պահանջներին, պայմանավորած լինեին «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարման առաջացումը /Դեպքի առաջացումը/, չեն դիտվում: Իսկ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի և «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդների կողմից ՃԵԿ-ի 65-րդ կետին հակասող գործուղությունների կատարումը պատճառական կապի մեջ չի գտնվում «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարման /Դեպքի/ առաջացման հետ: Համաձայն

ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/856 հաշվետվության՝ Դեպքի արդյունքում «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.444.000 ՀՀ դրամ: Համաձայն ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվության՝ Դեպքի արդյունքում «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.138.000 ՀՀ դրամ: «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ը, ելնելով «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի սեփականատեր Մկրտիչ Փահլևանյանի կողմից ներկայացված կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմումից, 07.05.2013թ. նշանակել է կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից որակավորված «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ին: «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացված կրկնակի փորձաքննության արդյունքում տրված թիվ Հ 054 եզրակացության համաձայն՝ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.195.500 ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դեպքի հետևանքով գույքին պատճառված վնասներ են կրել երկու անձինք՝ տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվել են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Ելնելով վերոնշյալ համամասնության սկզբունքից՝ «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի սեփականատեր Անդրանիկ Արտոյանին ապահովագրական հատուցում տրվել է 984.732 ՀՀ դրամի չափով, իսկ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի սեփականատեր Մկրտիչ Փահլևանյանին՝ 815.268 ՀՀ դրամի չափով: Հայցվոր Մկրտիչ Փահլևանյանի կողմից ներկայացված «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ Ա-115 եզրակացության համաձայն՝ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմել է 1.938.000 ՀՀ դրամ: «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ Ա-115 եզրակացությամբ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը որոշվել է հետևյալ կարգով՝ մինչև վթարը «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի շուկայական գին է նշվել 2.200.000 ՀՀ դրամը, որից հանվել է ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվությամբ /առաջնային փորձաքննության եզրակացություն/ որոշված մնացորդային արժեքը՝ 262.000 ՀՀ դրամը, և արդյունքում որպես վնասի չափ ստացվել է 1.938.000 ՀՀ դրամ գումար: «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ն չի հանդիսանում «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից որակավորված փորձագետ, որպիսի հանգամանքը հաստատվում է նաև «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից ներկայացված առարկություններով: «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ն փորձաքննությունը չի իրականացրել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից սահմանված կարգով և համապատասխան մեթոդաբանությամբ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն.

1. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Բյուրոյի որակավորած փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) կողմից, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, որոնց համար Բյուրոյի կանոններով կարող է նախատեսվել ապահովագրական ընկերության կողմից մեղավորության որոշման և (կամ) վնասի չափի գնահատման պարզեցված կարգ:

3. Փորձաքննությունն իրականացնելիս և գույքին պատճառված վնասները գնահատելիս փորձագետը պարտավոր է ղեկավարվել օրենքով, այլ իրավական ակտերով, ներառյալ՝ Բյուրոյի խորհրդի՝ սույն օրենքի հիման վրա ընդունած՝ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների գնահատման և փորձաքննության կարգով ու մեթոդաբանությամբ:

Սույն նորմի վերլուծությունից հետևում է, որ ԱՊՊԱ ոլորտում տուժողի գույքին պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումն իրականացվում է հետևյալ պայմանների պահպանմամբ՝

1. պատճառված վնասի չափը կարող է որոշվել միայն ,Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոե ԻԱՄ-ի կողմից որակավորված փորձագետի եզրակացությամբ և

2. պատճառված վնասի գնահատմանն ուղղված փորձաքննությունը պետք է իրականացվի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից սահմանված կարգով և մեթոդաբանությանը համապատասխան:
ԱՊՊԱ ոլորտում փորձաննությունների իրականացման կարգը և մեթոդաբանությունը հստակորեն սահմանված են ինչպես ԱՊՊԱ օրենքով, այնպես էլ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից ընդունված կանոններով:
Մասնավորապես, փորձաքննությունների իրականացման կարգը և մեթոդաբանությունը սահմանվում են ԱՊՊԱ օրենքի 16-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածներով և Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի և մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» RL 1-013 և «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողին պատկանող գույքի ոչնչացման /80% և ավելի վնասի/ դեպքում գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանության» RL 1-015 կանոններով: Նշված իրավական ակտերով տրված իրավակարգավորումը հանգում է նրան, որ գույքի ոչնչացման, այսինքն՝ դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին կամ տնտեսապես չհիմնավորված /վերանորոգման ծախսերը կգերազանցեն նախքան պատահարը գույքի արժեքի 80 տոկոսը/ լինելու դեպքում գույքին պատճառված վնասը որոշվում է մնացորդային արժեքների հաշվարկի հիման վրա: Այսինքն՝ տուժողի ավտոտրանսպորտային միջոցի ոչնչացման դեպքում ապահովագրական գումարի սահմաններում հատուցվում է մինչև դրա ոչնչացման պահը գնահատված արժեքի և Բյուրոյի խորհրդի սահմանած կարգով հաշվարկված՝ դրա մնացորդային արժեքների տարբերությունը:
Ելնելով վերոշարադրյալ իրավական հիմնավորումների և սույն գործող առկա փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից՝ ակնհայտ է, որ «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ Ա-115 եզրակացությունը չի կարող դրվել Դեպքի արդյունքում «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափի գնահատման հիմքում հետևյալ պատճառաբանությամբ. նախ՝ «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ն չի հանդիսանում Բյուրոյի կողմից որակավորված փորձագիտական կազմակերպություն, երկրորդ՝ վերջինիս կողմից վնասի չափի գնահատմանն ուղղված փորձաքննությունն իրականացվել է Բյուրոյի կողմից սահմանված կարգին և մեթոդաբանությանը ոչ համապատասխան: Մասնավորապես, «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ն իր կողմից որոշված ավտոմեքենայի՝ մինչև վնասվելը ունեցած շուկայական գնից՝ 2.200.000 ՀՀ դրամից հանել է գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանությամբ իրականացված առաջնային փորձաքննության արդյունքում տրված ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվությամբ որոշված առկա վնասվածքներով ավտոմեքենայի գինը՝ 262.000 ՀՀ դրամը: Մինչդեռ, ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվությամբ որոշված առկա վնասվածքներով ավտոմեքենայի գինը՝ 262.000 ՀՀ դրամը որոշվել է՝ կիրառելով գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանությունը ավտոմեքենայի՝ մինչև վնասվելը ունեցած արժեքի՝ 1.400.000 ՀՀ դրամի նկատմամբ: Բացի այդ ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվությունը հանդիսանում է առաջնային փորձաքննության արդյունք, որը կրկնակի փորձաքննության իրականացմամբ կորցրել է իր ուժը:
Հայտնեց նաև, որ, և՛, «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացությամբ, և՛, 01.03.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ 09.02.2013թ. Ռազմիկ Խաչատրյանի վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի, Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի և Անդրանիկ Արտոյանի վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարը դիտարկվել է որպես մեկ ճանապարհատրանսպորտային պատահար:
«ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացությամբ 09.02.2013թ. տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի շրջանակներում տեխնիկական վերլուծության են ենթարկվել ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակից յուրաքանչյուր վարորդի գործողությունը և առաջադրված հարցերի պարզաբանմամբ եզրակացվել է, որ տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը պայմանավորված է եղել «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդ Ռազմիկ Խաչատրյանի կողմից թույլ տրված ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններ կատարելով, իսկ մյուսների կողմից թույլ տրված խախտումներր տվյալ

ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման հետ պատճառական կապի մեջ չեն գտնվում:
Հաշվի առնելով «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացությամբ, և Բ 01.03.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքները՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից կայացվել են ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH31023 A1 և թիվ SH31023 A2 որոշումները, որոնցով հատուցվել են 09.02.2013թ. ապահովագրական պատահարի արդյունքում տուժողներ հանդիսացող Մկրտիչ Փահլևանյանին և Անդրանիկ Արտոյանին պատճառված վնասները:
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից կայացված ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH31023 A1 և թիվ SH31023 A2 որոշումներով ևս 09.02.2013թ. Ռազմիկ Խաչատրյանի վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի, Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի և Անդրանիկ Արտոյանի վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարը, հաշվի առնելով տվյալ պատահարի հանգամանքները հավաստող թույլատրելի ապացույց հանդիսացող եզրակացությունը և քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, դիտարկվել է որպես մեկ ապահովագրական պատահար:
01.03.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, ինչպես նաև «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից կայացված ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH31023 A1 և թիվ SH31023 A2 որոշումները երբևէ չեն վիճարկվել Ռազմիկ Խաչատրյանի կողմից:
Հետևաբար դրանց հիմքում ընկած և դրանցով հաստատված փաստական հանգամանքները չեն կարող կասկածի տակ դրվել, քանի դեռ հակառակը հիմնավորող որևէ թույլատրելի ապացույց չի ներկայացվել:
Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանի կողմից որևէ թույլատրելի և/կամ վերաբերելի ապացույց չի ներկայացվել, որով կհաստատվեր երկու ապահովագրական պատահար տեղի ունենալու հանգամանքը: Մասնավորապես, ի հավաստումն ներկայացված այն պնդումների, որ առկա է երկու ապահովագրական պատահար, դրանք չեն նույնանում, երկու պատահարների միջև առկա են ժամանակային, տարածական, թույլ տրված խախտման բնույթի, խախտումը կատարած անձանց, վնասված գույքի տարբերություններ, որևէ թույլատրելի ապացույց չի ներկայացվել: Իսկ սույն գործում առկա ապացույցներով հաստատված է, որ 09.02.2013թ. տեղի ունեցել մեկ ապահովագրական պատահար:
Այսպիսով՝ հաշվի առնելով վերը նշված և հիմնավորումները և սույն գործում առկա ապացույցները՝ գտնում են, որ 09.02.2013թ. Ռազմիկ Խաչատրյանի վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի, Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի և Անդրանիկ Արտոյանի վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի է ունեցել մեկ ապահովագրական պատահար, հետևաբար «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից պատահարի արդունքում պատճառված վնասները հատուցվել են մեկ ապահովագրական պատահարի համար նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում:
Հաշվի առնելով վերը նշված պատճառաբանությունները և հիմնավորումները խնդրեց հայցը մերժել:

Պատասխանող «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցի դեմ առարկեց և դատարանին հայտնեց, որ իրականացնելով սույն փորձաքննությունը՝ «Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊ Ընկերությունը խստագույնս պահպանել է ՀՀ Ավտոապահովագրողների Բյուրո ԻԱՄ-ի կանոնները: Իրենց կողմից կազմված հաշվետվության մեջ օգտագործվել է՝ «Կանոնների RL 1-015, ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողին պատկանող գույքի ոչնչացման /80% և ավելի վնասի/ դեպքում գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանություն»-ը, մեքենան ենթարկվել է մանրակրկիտ տեսողական զննության, հետազոտությունների արդյունքում արված հետևությունների հիման վրա, այն է՝ «Նման վերականգնման գինը չի կարող գնահատվել որպես ավտոմեքենային պատճառված նյութական վնասի չափանիշ, քանի որ մեքենայի նման էական վնասվածքների պայմաններում դրա վերականգնման ընդհանուր ծախսերը կարող են էական մաս կազմել ավտոմեքենայի մինչև վնասվելն ունեցած շուկայական գնի նկատմամբ (80% և ավել), որ կբերի ապրանքային վիճակի փոփոխության և չի ելնի

նշված վիճակից: Նման վնասվածքներով ավտոմեքենայի վերականգնումը մեր տեսանկյունից նպատակահարմար չէ, քանի որ դրա վերականգնումից հետո մեքենան կունենա էապես նոր ապրանքային վիճակ, որն էականորեն կտարբերվի մինչև վնասվելը մեքենայի ունեցած ապրանքային վիճակից:» /տես վերոհիշյալ կանոնների մեթոդաբանությունը/:
Ավելին, հայցադիմումում հիշատկվում է հայցվորի անհիմն կասկածների շարադրումը, որոնք զուրկ են ցանկացած տեսակի տրամաբանական վերլուծություններից և փաստարկներից և հիմնված են ցանկալին իրականության վերածելու միտումներով: Մասնավորապես, հիշատակվում է, որ ապահովագրական ընկերությունները վերջին հաշվով շահագրգռված են յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում խուսափելու վնասը հատուցելուց կամ նվազեցնելու հատուցման չափը:
Հայցադիմումի մեջ հայցվորի մեկ այլ անհիմն ենթադրությամբ հիշատակվում է, չնայած կրկնակի փորձաքննությունը կատարվում է տուժողի միջոցների հաշվին, այնուհանդերձ այն նշանակվում է Բյուրոյի որոշմամբ և նրա կողմից որոշված փորձագետի կողմից, այդպիսի հանգամանքը կասկած կարող է հարուցել փորձաքննության եզրակացության նկատմամբ: Բացի այդ, սկզբնական և կրկնակի փորձաքննությունները, ինչպես բովանդակային, այնպես էլ վնասի չափը գնահատելու առումով էապես չեն էլ տարբերվում, որը նույնպես կասկած է հարուցում, քանի որ սկզբնական և կրկնակի փորձաքննության արդյունքներում էական տարբերության դեպքում վտանգի տակ կդրվի սկզբնական փորձաքննություն կատարող անձի՝ Բյուրոյի հետ կնքած պայմանագիրը:
Սովորաբար, կրկնակի փորձաքննությունը իրականացնող փորձագետները կամ անփոփոխ են թողնում սկզբնական փորձագետի եզրակացությունը վնասի չափի վերաբերյալ կամ էլ եզրակացություն են տալիս աննշան տարբերությամբ, որպեսզի չվտանգեն իրենց գործընկերների աշխատանքային պայմանագիրը և չվտանգեն նրանց գործարար համբավը:
Կարծում են, ինչպես այս, այնպես էլ ներկայացված բոլոր հիմնավորումները զուրկ են ցանկացած փաստարկներից և կրում են ավելի զգացմունքային բնույթ և արտահայտում են հայցվորի հոգեվիճակը, ինչ վերաբերվում է սկզբնական և կրկնակի փորձաքննությունների՝ ըստ հայցվորի բովանդակային նմանությանը փորձագիտական կազմակերպությունները և փորձագետները անցնում են համապատասխան որակավորման գործընթաց ՀՀ Ավտոապահովագրողների Բյուրո ԻԱՄ-ի կանոներին համապատասխան:
Անդրադառնալով նաև «Պ.Ա.Գ.ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի կողմից տրմադրված Ա-115 առ 07.06.2013թ.հաշվետվությունը և նրանում առկա բացահայտ թերություններին՝
1. իր հաշվետվության մեջ «պրոֆեսիոնալ գնահատող»-ը նշել է վերոհիշյալ Տ/Մ-ի արժեքը մինչ վթարը կազմել է 2՝200՝000 (երկումիլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, սակայն անհասկանալի է «մինչ վթար» ժամանակահատվածը քանի որ այն կրում է անորոշ բնույթ, ընդ որում հաշ՝վետվության մեջ «գնահատման ամսաթիվ» պարբերությամբ պարզաբանվում է հիմնովին մեկ այլ բան:
2. Հաշվետվության մեջ,որպես համեմատական Տ/Մ, «autobazar.am» կայքից բերված է ԳԱԶ 31105 մակնիշի 2006թ. արտադրության նույնատիպ Տ/Մորի արժեքն է 2՝380՝000 ՀՀ դրամ: Բայց համեմատական բերված Տ/Մ-ն համեմատելի միայն մոդելային տեսանկյունից, քանի որ այն ամբողջովին կահավորված է լրացուցիչ սարքավորումներով և որի վազքը ըստ կայքի կազմել է 53՝000կմ այն պարագայում, երբ դիտարկվող, վնասված ԳԱԶ 31105 մակնիշի 04 SO 045 պետ համարանիշի Տ/Մ-ի վազքը զննության պահին կազմել էր 251՝719կմ:
3. Վնասի հաշվարկի ժամանակ ակնհայտորեն տեղի է ունեցել գնահատողի կողմից անտրամաբանական հաշվարկ, քանի որ օգտագործվել է Ա764 ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման հաշվետվության արդյունքը, այն է՝ 262՝000ՀՀ դրամ մնացորդային արժեք: Այն ինչ տվյալ արդյունքը ստացվել է հիմք ընդունելով Տ/Մ-ի արժեքը 1՝400՝000 ՀՀ դրամ:
4. ՀՀ Ավտոապահովագրողների Բյուրո ԻԱՄ-ի պաշտոնական կայքից paap.am բացակայում է որևէ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք «Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ն որակավորված է որպես փորձագիտական կազմակերպություն և իրավասու է կատարել ԱՊՊԱ ոլորտում Տ/Մ-ին պատճառված վնասի հաշվետվությունների կազմում:
Ուստի հիմք ընդունելով վերանշյալը՝ խնդրեց հայցադիմումը մերժել՝ անհիմն լինելու ուժով:

Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանի ներկայացուցիչը հայցի դեմ առարկեց և դատարանին հայտնեց, որ 2013 թվականի հունվարի 9-ին Ռազմիկ Խաչատրյանի և «Ինգո

Արմենիա» ԱՓԲԸ-ի միջև կնքվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» N SH468362 պայմանագիրը (կազմված է ապահովագրական վկայագրից և ԱՊՊԱ պայմաններից), և Պատասխանողին հատկացվել է ԱՊՊԱ կտրոն: Պայմանագրով սահմանվել է, որ ապահովագրվում է ապահովադիր Ռազմիկ Խաչատրյանի կողմից իրեն պատկանող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի ավտոմեքենայի (19OS057 հաշվառման համարանիշ, 1986 թվականի արտադրության, ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայական SA057866՝ տրված 99001-ի կողմից 2009 թվականի նոյեմբերի 16-ին) օգտագործումից բխող պատասխանատվությունը՝ անձնական և գույքային վնասներից: Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ գույքին պատճառված վնասների համար ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի ապահովագրական գումարը կազմում է 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի պայմանների 3.1 կետի համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի և (կամ) Վկայագրում նշված ավտոտրանսպորտային միջոցը օրինական հիմքերով տիրապետող այլ անձի (անձանց) կողմից սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ՀՀ տարածքում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով տուժող անձի (անձանց) պատճառված անձնական և գույքային վնասները: 2013 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, Երևան-Գյումրի ավտոճանապարհի 70-րդ կմ հատվածի՝ դեպի Երևան տանող ուղեմասով «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19OS057 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկելիս Ռազմիկ Խաչատրյանի կողմից թույլ են տրվել ՃԵԿ 65-րդ, 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտան-գության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով նրա կողմից վարած ավտոմեքենան դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս, ընդհարվել է հանդիպակաց երթևեկող Հայցվորի վարած «ԳԱԶ 31105-120» մակնիշի 04OS045 հաշվառման համարանիշի ավտոմեքենային ու պատճառել գույքային վնաս: Վթարից մի քանի րոպե հետո, երբ Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանը, դուրս գալով ավտոմեքենայից, սկսել է օգնություն ցուցաբերել Հայցվորին, Գյումրի քաղաքից դեպի Երևան քաղաքի ուղղությամբ երթևեկող Անդրանիկ Արտոյանը, խախտելով ՃԵԿ 65-րդ կետի պահանջն, իր վարած «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22OL611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ընթանալով շուրջ 40 կմ/ժ արագությամբ բախվել է «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19OS057 հաշվառման համարանիշի ավտոմեքենային: Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանը սահմանված կարգով կատարել է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Պայմանների հետվթարային պահանջները: Դատաավտոտեխնիկական փորձաքննության N 06051308 եզրակացության համաձայն՝ «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22OL611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդ Անդրանիկ Արտոյանը, խախտելով ՃԵԿ 65-րդ կետի պահանջները, վթարից առաջ գերազանցել է սահմանված արագությունը: Անդրանիկ Արտոյանն իր ընթացքի ուղղության երթևեկելի ուղեմասում գտնվող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19OS057 հաշվառման համարանիշի ավտոմեքենան հայտնաբերելու պահից սկսած, երթևեկության անվտանգությունն ապահովելու և վերջինիս հետ ընդհարումը կանխելու նպատակով, տեխնիկական տեսակետից պետք է ղեկավարվեր ՃԵԿ 67-րդ կետի պահանջներով, սակայն առաջադրված պայմաններում Անդրանիկ Արտոյանը նշված ավտոմեքենայի հետ ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն չի ունեցել: ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզի քննչական բաժնի Թալինի խմբի քննիչ Վ.Մարտիրոսյանի կողմից նախապատրաստված նյութերով 2013 թվականի մարտի 1-ին կայացվել է «Քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշում, որով Ռազմիկ Խաչատրյանի և Անդրանիկ Արտոյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով: Վնասի գնահատման սկզբնական փորձաքննության թիվ Ա764 եզրակացության համաձայն՝ 2013 թվականի փետրվարի 9-ին տեղի ունեցած վթարի հետևանքով «ԳԱԶ 31105-120» մակնիշի 04OS045 հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի չափը արժեքային արտահայտությամբ, գնահատումն անցկացնելու ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կազմել է 1.138.000 (մեկ միլիոն հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամ (1.400.000 (ավտոմեքենայի գինը)-262.000 (ավտոմեքենայի գինը վթարից առաջացած վնասվածքներով=1.138.000): Վնասի գնահատման կրկնակի փորձաքննության թիվ Հ054 եզրակացության համա-ձայն՝ 2013 թվականի փետրվարի 9-ին տեղի ունեցած վթարի հետևանքով «ԳԱԶ 31105-120» մակնիշի 04OS045 հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի չափն արժեքային արտահայտությամբ, գնահատումն անցկացնելու ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կազմել է 1.195.500 (մեկ միլիոն հարյուր իննսունհինգ հազար

հինգ հարյուր) ՀՀ դրամ (1.500.000 (ավտոմեքենայի գինը)-304.500 (ավտոմեքենայի գինը վթարից առաջացած վնասվածքներով)=1.195.500): «Ինգո Արմենիա» ՍՊԸ-ի կողմից 2013 թվականի հունիսի 1-ին կայացված «ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ» թիվ SH31023-A2 որոշման համաձայն՝ «ԳԱԶ 31105-120» մակնիշի 04OS045 հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի մեծությունը կազմել է 1.195.500 ՀՀ դրամ, իսկ հատուցման ենթակա գումարը, ապահովագրական գումարը վնասված երկու ավտոմեքենաների վրա համամասնորեն բաշխելով, կազմել է 815.268 ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիշյալ հոդվածի բովանդա-կության համաձայն՝ եթե դատավարության որևէ կողմը վկայակոչում է որևէ փաստ, ապա նա էլ պարտավոր է ապացուցել այդ փաստի առկայությունը: Սա նշանակում է, որ դատավարության կողմերը պարտավոր են, ի հիմնավորումն իրենց վկայակոչած փաստի, ներկայացնել թույլատրելի և վերաբերելի ապացույցներ:

Այս պարագայում հայցադիմումում նշված փաստերը պետք է ապացուցվեն Հայցվորի կողմից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Յուրաքանչյուր դեպքում որևէ փաստի ապացուցման կապակցությամբ որևէ ապացույցի թույլատրելիությունը գնահատելիս պետք է հիմք ընդունել վկայակոչվող իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմերը. մասնավորապես՝ պետք է պարզել, թե կոնկրետ իրավահարաբերության, փաստի առկայությունը հաստատելու համար ինչպիսի՞ թույլատրելի ապացույցներ են պահանջում նյութական իրավունքի նորմերը:

Պատասխանողի հավաստմամբ՝ ի հիմնավորումն վերոնշյալ փաստերի՝ Հայցվորը չի ներկայացրել որևէ ապացույց, որի հիման վրա սույն գործով դատավարական հարաբերությունների մասնակիցները, այդ թվում՝ Դատարանը, կարող են եզրահանգել, որ հայցադիմումում նշած փաստերը համապատասխանում են իրականությանը: Այդ թվում չեն ներկայացվել Հայցվորի գույքին պատճառված վնասի չափը պարզելու նպատակով իրականացված փորձաքննությունների անդյունքների հավաստիությունը կասկածի տակ դնող ապացույցներ:

Թեև հայցադիմումի հիմքում ընկած փաստերի ապացուցման բեռը կրում է Հայցվորը, այնուամենայնիվ՝ պատասխանող Ռազմիկ Խաչատրյանը սույնով հայտնում է իր առարկություններն այդ փաստերի՝ իրականությանը չհամապատասխանելու մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով: Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ապահովագրություն:

Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են սույն օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրված է, սույն օրենքի համաձայն՝ պարտադիր ապահովագրման ենթակա է օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող և (կամ) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարվող ավտոտրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործումից բխող պատասխանատվությունը, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Սույն օրենքի համաձայն՝ հատուցման ենթակա են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած վնասները:

Ի կատարում վերոնշյալ իրավանորմերի՝ 2013 թվականի հունվարի 9-ին Ռազմիկ Խաչատրյանի և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի միջև կնքվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պա-տասխանատվության պարտադիր

ապահովագրության» թիվ SH468362 պայմանագիրը. և Պատասխանողին տրվել է ԱՊՊԱ կտրոն: Պայմանագրով սահմանվել է. որ ապահովագրվում է ապահովադիր Ռազմիկ Խաչատրյանի կողմից իրեն պատկանող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19OS057 հաշվառման համարանիշի 1986 թվականի արտադրության ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը՝ անձնական և գույքային վնասներից:
«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:
Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի իրավասահմանող՝ 5-րդ, 11-րդ, 13-րդ և 15-րդ կետերի համաձայն՝
5) տուժող (տուժած անձ)՝ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով սույն օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որը սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք.
11) ապահովագրական պատահար՝ սույն օրենքով նախատեսված դեպք կամ իրադարձություն է, որի դեպքում ապահովագրական ընկերությունը կամ Բյուրոն պարտավորվում է տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարել ապահովագրական հատուցում.
13) Ապահովագրական գումար՝ ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափ.
15) Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա գումար:
Իսկ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը մեկ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված մեկ ապահովագրական պատահարի համար չպետք է պակաս լինի՝ գույքին պատճառված վնասների համար՝ 1 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարից՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության համաձայն՝ Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:
Պայմանագրի (վկայագրի) 8-րդ կետի համաձայն՝ գույքին պատճառված վնասների համար ապահովագրական գումարը կազմում է 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի:
Վերոնշյալ փաստական հանգամանքների և իրավակարգավորումների համադրման, իրավանորմերի տառացի մեկնաբանության արդյունքում ակնհայտ է դառնում, որ Պատասխանողի կողմից վարած ավտոմեքենան Հայցվորին պատկանող «ԳԱԶ 31105-120» մակնիշի 04OS045 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ վթարի ենթարկվելուց հետո որոշակի ժամանակ անց վթարի է ենթարկվել «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22OL611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ, այսինքն՝ առաջին ապահովագրական պատա-հարը տեղի ունենալուց և ավարտվելուց հետո տեղի է ունեցել մեկ այլ ապահովագրական պատահար: Նման պայմաններում ապահովագրական ընկերության կողմից հատուցում իրականացնելիս պետք է հիմք ընդունվեր երկու ինքնուրույն դեպքերի առկայության փաստը, այլ ոչ թե արհեստականորեն դրանք ընդհանրացվեին մեկ դեպքի կազմում և հատացումն իրականացվեր երկու Պատասխանողի ավտոմեքենայի հետ բախված երկու ավտոմեքենաների միջև մեկ ապահովագրական դեպքի համար նախատեսված գումարը բաշխելու միջոցով: Այսինքն՝ երկու ավտոմեքենաների վարորդների տրված հատուցումները պետք է դիտարկվեին ինքնուրույն՝ ապահովագրական հատուցման գումարի առավելագույն չափի շրջանակում:
Այսինքն՝ եթե նույնիսկ ենթադրվի. որ «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22OL611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդը նույնպես գույքային վնասներ է կրել երրորդ անձի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով. ապա այդ դեպքում վթարի հետևանքով Հայցվորի գույքին վնաս պատճառելն այլ՝ առանձին ապահովագրական պատահար պետք է հանդիսանա. քանի որ այդ և դրանից հետո տեղի ունեցած պատահարները չեն նույնանում (համընկնում). երկու պատահարների միջև առկա են ժամանակային. տարածական. թույլ տրված խախտման բնույթի. խախտումը կատարած անձանց (սուբյեկտների). վնասված գույքի

տարբերություններ, այլ կերպ ասած՝ ժամանակի և տարածության մեջ առկա են երկու դեպք (ապահովագրական պատահար):
Այս պայմաններում Հայցվորին վճարման ենթակա ապահովագրական գումարը պետք է հաշվարկվեր, և ապահովագրական հատուցումն իրականացվեր Պայմանագրում նշված՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի ապահովագրական ամբողջ գումարի՝ 1.800.000 ՀՀ դրամի սահմաններում:
Ավելին՝ առկա է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22ՕԼ611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդին անհիմն հատուցում վճարելու փաստ: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ որևէ թույլատրելի կամ վերաբերելի ապացույցով չի հիմնավորվել, որ առկա է Ռազմիկ Խաչատրյանի մեղավոր և հակաիրավական վարքագիծը (գործողության կամ անգործության ձևով) «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22ՕԼ611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ ընդհարվելու ու վնաս պատճառելու մեջ:
Այսպես՝ Դատաավտոտեխնիկական փորձաքննության N06051308 եզրակացության մեջ որևէ նշում առկա չէ այն մասին, որ «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» և «ԶԻԼ ՄՄԶ 45021» ավտոմեքենաների վթարը տեղի է ունեցել Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանի մեղավոր վարքագծի հետևանքով: Նման եզրահանգում առկա չէ նաև փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշման մեջ: Ավելին՝ այդ որոշմամբ գնահատական է տրվել նաև «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» ավտոմեքենայի վարորդի գործողություններին ու նշվել է, որ վարորդ Անդրանիկ Արտոյանը թույլ է տվել ՀՀ ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի և «Ճանապարհային ենթակեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, սակայն նրանց գործողությունները պատճառական կապի մեջ չեն վթարի առաջացման հետ: Դրանով հանդերձ, ինչպես արդեն նշվել է, որևէ ապացույց առկա չէ այն մասին, որ պատճառական կապ կա Պատասխանողի գործողությունների ու «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» և «ԶԻԼ ՄՄԶ 45021» ավտոմեքենաների վթարի դեպքի միջև:
Անդրանիկ Արտոյանին հատուցում վճարելու վերաբերյալ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի 2013 թվականի հունիսի 1-ի թիվ SH31023_A2 որոշման մեջ՝ որպես ապահովագրական պատահարի առաջացման պատճառ, նշվել է՝ Ռազմիկ Խաչատրյանը թույլ է տվել ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններ: Նման հիմք մինչ այդ որևէ տեղ նշված չի եղել:
Այս պայմաններում «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22ՕԼ611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդը չէր կարող հանդիսանալ պատասխանող Ռազմիկ Խաչատրյանի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով գույքային վնասներ կրած անձ, հետևաբար՝ չէր կարող ունենալ պատասխանողի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով ապահովագրական հատուցում ստանալու իրավունք:
«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, ինչպես նաև օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում՝ օրենսդրական այլ ակտերով:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:
Տվյալ դեպքում Պատասխանողը չի կարող մեկ այլ սուբյեկտի փոխարեն կրել Հայցվորին գումար վճարելու պարտավորություն, ինչ էլ իր հերթին բացառում է Պատասխանողի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսների վճարման պարտավորություն ունենալը: Այս առումով կարևորվում է այն փաստը, որ մինչ օրս Հայցվորի կողմից գումար վճարելու որևէ պահանջ Պատասխանողին չի ներկայացվել, չէր էլ կարող ներկայացվել, քանի որ հենց Հայցվորի համար է անհասկանալի եղել (մինչև դատարանի կողմից նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությունն ստանալը), թե որքան է կազմում իր պահանջի չափը: Գտնում են, որ Պատասխանողի մասով առկա չէ վերոնշյալ նորմի կիրառման փաստական հիմքերը, քանի որ Պատասխանողի կողմից վարած ավտոմեքենայով մեկ ուրիշին վնաս պատճառելն ապահովագրական պատահար հանդիսանալով

ապահովագրված է եղել «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի մոտ և միայն վերջինս կարող է համարվել այդ նորմի հիման վրա գումար վճարելու պարտավորություն ունեցող սուբյեկտ:
Վերոնշյալ իրավական և փաստական հիմքերով, գտնում են, որ Հայցվորի կողմից Պատասխանողին ներակայցված բոլոր պահանջներն անհիմն են ու ենթակա են մերժման:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված նորմի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:
Սույն քաղաքացիական գործով պատասխանող (նախկինում՝ երրորդ անձ) Ռազմիկ Խաչատրյանի շահերի ներկայացման կապակցությամբ վերջինիս և «ԼԵԳԱԼ ՔՆՍԱԼԹԻՆԳ ԹԵՔՆՈԼՈՋԻԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2013 թվականի հոկտեմբերի 11-ին կնքվել է Իրավաբանական ծառայություն մատուցելու N 14-2013 պայմանագիրը, որով պայմանագրի գինը կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանվել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
Ելնելով վերոգրյալից խնդրեց հայցն ամբողջությամբ մերժել:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով Մկրտիչ Փահլևանյանից հօգուտ Ռազմիկ Խաչատրյանի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված վարձատրության գումար:

II

1. Գործի փաստերը.
Հայցադիմումի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Համաձայն «Կարկոմավտո» ՍՊԸ-ի /վաճառող/ և Մկրտիչ Փահլևանյանի /գնորդ/ միջև 19.03.2006թ. կնքված ավտոմեքենայի առուվաճառքի թիվ 000023 պայմանագրի՝ վաճառողը պարտավորվել է ձեռք բերել և գնորդին ի սեփականության հանձնել գործարանային արտադրության «Գազ-31105-120» մակնիշի ավտոմեքենան, որի գինը կազմել է՝ 4.135.000 ՀՀ դրամ:
2.Համաձայն «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի և Մկրտիչ Փահլևանյանի միջև 21.01.2013թ. կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG 654795 վկայագրի՝ 21.01.2013 թվականից մինչև 21.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար ապահովագրվել է «Գազ-31105» մակնիշի 04 SO 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Վկայագրի համաձայն՝ գույքին պատճառված վնասների համար սահմանվել է 1.800.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:
3.Համաձայն «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացության՝
1. և 2. առաջադրված պայմաններում «ԶԻԼ ՄՄԶ-45021» մակնիշի 19 OS 057 հ/հ ավտոմոբիլի վարորդը, մինչպատահարային երթևեկության ընթացքում ավտոմոբիլը վարելով առկա պայմաններում տեսանելիությանը համապատասխանող արագությունը գերազանցող արագությամբ և նախապես՝ հաշվի չառնելով առկա ճանապարհային և օդերևութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ, ու չընտրելով երթևեկության համապատասխան անվտանգ ու սահուն ռեժիմ, իրականացրել է իր վարած ավտոմոբիլի ընթացքի ոչ պատշաճ կառավարում, որի արդյունքում ավտոմոբիլը՝ դառնալով անկառավարելի, ենթարկվել է կողասահքի, դուրս եկել հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմաս և ընդհարվել այդ ուղեմասով ընթացող «ԳԱԶ-3110» մակնիշի 04 SO 045 հ/հ ավտոմոբիլին, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն ու թույլ տվել «ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի 3 կետի և ՃԵԿ-ի 65 ու 66 կետերի պահանջներին հակասող գործողություններ, դրանով իսկ պայմանավորել տվյալ պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից: Առաջադրված պայմաններում «ԶԻԼ ՄՄԶ-45021» 19 OS 057 հ/հ ավտոմոբիլի վարորդը երթևեկության անվտանգությունն ապահովելու և տվյալ պատահարի առաջացումը կանխելու նպատակով պետք է իրականացներ իր վարած ավտոմոբիլի ընթացքի պատշաճ կառավարում. այն է՝ նախ մինչպատահարային երթևեկության ընթացքում ավտոմոբիլը

վարեր առկա պայմաններում տեսանելիությանը համապատասխանող արագությունը չգերազանցող արագությամբ, ու հաշվի առնելով առկա ճանապարհային և օդերևութաբանական պայմանները, մասնավորապես, ճանապարհային ծածկույթի վիճակն ու տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ, ընտրեր երթևեկության այնպիսի անվտանգ ու սահուն ռեժիմ, որը կապահովեր ավտոմոբիլի շարժման նկատմամբ լիարժեք կառավարման հնարավորությունը, և, որի պայմաններում ավտոմոբիլը կպահպաներ ընթացքի կայունությունն ու կառավարելիությունը՝ կողասահքի չէր ենթարկվի և հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմաս դուրս չէր գա։ I

3. և 4. Առաջադրված պայմաններում «ԳԱԶ-3110» մակնիշի 04 SO 045 հ/հ ավտոմոբիլի վարորդն իր ընթացքի ուղղության երթևեկելի ուղեմաս մուտք գործած «ԶԻԼ ՄՄԶ-45021» մակնիշի 19 OS 057 հ/հ ավտոմոբիլը հայտնաբերելու պահից սկսած վերջինիս հետ ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն չի ունեցել, և նրա կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որպիսիք տեխնիկական տեսակետից հակասելով ՃԵԿ-ի պահանջներին պայմանավորած լինեին «ԶԻԼ ՄՄԶ-45021» մակնիշի 19 OS 057 հ/հ ավտոմոբիլի հետ ընդհարման առաջացումը, չեն դիտվում:

Առաջադրված պայմաններում «ԳԱԶ-3110» մակնիշի 04 SՃ 045 հ/հ ավտոմոբիլի վարորդն ավտոմոբիլը վարելով տեսանելիությանը համապատասխանող թույլատրելի առավելագույն արագության 36,3 կմ/ժ մեծությունը գերազանցող շուրջ 40 կմ/ժ արագությամբ, թույլ է տվել ՃԵԿ-ի 65 կետի պահանջին հակասող գործողություն, ինչը սակայն տվյալ կոնկրետ դեպքում պատճառական կապի մեջ չէ «ԶԻԼ ՄՄԶ-45021» մակնիշի 19 OS 057 հ/հ ավտոմոբիլի հետ ընդհարման առաջացման հետ:

5. և 6. Առաջադրված պայմաններում «MITSUBISHI GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22 OL 611 հ/հ ավտոմոբիլի վարորդն իր ընթացքի ուղղության երթևեկելի ուղեմասում գտնվող «ԶԻԼ ՄՄԶ-45021» մակնիշի 19 OS 057 հ/հ ավտոմոբիլը հայտնաբերելու պահից սկսած վերջինիս հետ ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն չի ունեցել և նրա կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որպիսիք տեխնիկական տեսակետից հակասելով ՃԵԿ-ի պահանջներին պայմանավորած լինեին «ԶԻԼ ԱՄԶ-45021» մակնիշի 19 OS 057 ավտոմոբիլի հետ ընդհարման առաջացումը, չեն դիտվում:

Առաջադրված պայմաններում «MITSUBISHI GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22 OL 611 հ/հ ավտոմոբիլի վարորդն ավտոմոբիլը վարելով տեսանելիությանը համապատասխանող թույլատրելի առավելագույն արագության 36,3 կմ/ժ մեծությունը գերազանցող շուրջ 40 կմ/ժ արագությամբ, թույլ է տվել ՃԵԿ-ի 65 կետի պահանջին հակասող գործողություն, ինչը սակայն տվյալ կոնկրետ դեպքում պատճառական կապի մեջ չէ «ԶԻԼ ԱԱԶ-45021» մակնիշի 19 OS 057 հ/հ ավտոմոբիլի հետ ընդհարման առաջացման հետ:

4.Համաձայն ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզի քննչական բաժնի Թալինի քննչական խմբի քննիչ Վ.Մարտիրոսյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 01.03.2013թ. որոշման՝ 09.02.2013թ. ժամը 09:00-ի սահմաններում, Երևան-Գյումրի ավտոճանապարհի 70-րդ կմ հատվածի՝ դեպի Երևան տանող ուղեմասում միմյանց են բախվել Ռազմիկ Խաչատրյանի վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի, Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի և Անդրանիկ Արտոյանի վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենաները: Նախապատրաստված նյութերի հիման վրա պարզվել է, որ Ռազմիկ Խաչատրյանը իր վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայով երթևեկելիս, թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և ընդհարվել է հանդիպակաց երթևեկող Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն: Վթարից հետո նույն պահին Գյումրիի կողմից դեպի Երևանի ուղղությամբ երթևեկող Անդրանիկ Արտոյանը, իր վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայով, չունենալով վթարը կանխելու տեխնիկական հնարավորություն, բախվել է ճանապարհի՝ դեպի Երևան տանող ուղեմասում գտնվող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենային...: Դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 06051308 եզրակացության համաձայն՝ առաջադրված պայմաններում «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդ Ռազմիկ Խաչատրյանը, թույլ տալով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, դրանով իսկ պայմանավորել է Դեպքի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից: Դատաավտոտեխնիկական

փորձաքննության թիվ 06051308 եզրակացության համաձայն՝ առաջադրված պայմաններում «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի և «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդները «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարումը կանխելու տխնիկական հնարավորություն չեն ունեցել և նրանց կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որոնք, տեխնիկական տեսակետից հակասելով ՃԵԿ-ի պահանջներին, պայմանավորած լինեին «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարման առաջացումը /Դեպքի առաջացումը/, չեն դիտվում: Իսկ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի և «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդների կողմից ՃԵԿ-ի 65-րդ կետին հակասող գործուղությունների կատարումը պատճառական կապի մեջ չի գտնվում «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարման առաջացման հետ: Վերջիններս սակայն ՃԵԿ-ի խախտում թույլ տալու համար ենթակա են վարչական պատասխանատվության: Որոշվել է 09.02.2013թ. Երևան-Գյումրի ավտոճանապարհի 70-րդ կմ հատվածում Ռազմիկ Խաչատյանի և Անդրանիկ Արտոյանի կողմից ավտովթար կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել և քրեական հետպնդում չիրականացնել Ռազմիկ Խաչատրյանի և Անդրանիկ Արտոյանի արարքներում հանցագործության հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Որոշման պատճենն ուղարկել ՀՀՈ ՃՈ ծառայություն՝ Ռազմիկ Խաչատյանին և Անդրանիկ Արտոյանին վարչական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ:

5.Համաձայն «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվության՝ 22.03.2013թ. մինչև 26.03.2013թ. ընկած ժամանակահատվածում «Գազ-31105» մակնիշի 04 SO 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի գինը արժեքային արտահայտությամբ կարող է կազմել 1.400.000 ՀՀ դրամ, նշված վնասվածքներով ավտոմեքենայի գինը արժեքային արտահայտությամբ կարող է կազմել 262.000 ՀՀ դրամ, «Գազ-31105» մակնիշի 04 SO 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վնասի չափը կազմում է 1.138.000 ՀՀ դրամ /1.400.000-262.000/

6.Համաձայն 01.06.2013թ. ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH 31023 A2 որոշման «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲ ընկերության կողմից հատուցվել է «Գազ-31105» մակնիշի 04 SO 045 հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված 815.268 ՀՀ դրամի չափով նյութական վնասը:

7.Համաձայն 01.06.2013թ. ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH 31023 A1 որոշման «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲ ընկերության կողմից հատուցվել է «MITSUBISHI GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22OL611 հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված 984.732 ՀՀ դրամի չափով նյութական վնասը:

8.Համաձայն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի՝ 07.05.2013թ. թիվ Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացության՝ /որի կատարումը հանձնարարվել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից որակավորված «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ին/՝ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.195.500 ՀՀ դրամ: 06.05.2013թ. թիվ 164 անդորրագրի համաձայն Մկրտիչ Փահլևանյանի կողմից «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին, որպես կրկնակի փորձաքննության կանխավճար վճարվել է 25.000 ՀՀ դրամ:

9.Համաձայն «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից 07.06.2013թ. տրված թիվ Ա-115 եզրակացության՝ «Գազ-31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշով ավտեմեքենայի շուկայական արժեքը մինչև վթարը կազմել է 2.200.000 ՀՀ դրամ: Ըստ թիվ Ա/764 Ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման հաշվետվության, վնասված ավտոմեքենայի մնացորդային արժեքը կազմում է 262.000 ՀՀ դրամ: Մեքենայի վթարի հետևանքով սեփականատիրոջը պատճառված նյութական վնասը կկազմի՝ 2.200.000-262.000=1.938.000 ՀՀ դրամ: 10.06.2013թ. թիվ 24 դրամակղային մուտքի օրդերի Մկրտիչ Փահլևանյանի կողմից «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ին մասնագիտական եզրակացություն տալու համար վճարվել է 30.000 ՀՀ դրամ:

10.Համաձայն «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 07.04.2015թ. տրված թիվ 52171410 եզրակացության՝

1. Փորձաքննությանը տրամադրված վիճակում <GAZ-31105-120> մակնիշի, X9631105061318608 նույնացման (VIN)–ի համարով ավտոմեքենայի մինչվնասվածքային շուկայական գինը, արժեքային արտահայտությամբ, 2013թ. փետրվարի 09-ի դրությամբ գործող շուկայական գներով, կարող էր կազմել 1.500.000 դրամ:

2. <GAZ-31105-120> մակնիշի, X9631105061318608 նույնացման (VIN)–ի համարով

ավտոմեքենայի վնասվածքների հետևանքով, այդ ավտոմեքենայի /գույքի/ վնասի չափն արժեքային արտահայտությամբ, 2013թ. փետրվարի 09-ի դրությամբ գործող շուկայական գներով կարող էր կազմել 1.229.600 դրամ:
3. Վերոնշված <GAZ-31105-120> մակնիշի, X9631105061318608 նույնացման (VIN)–ի համարով վնասվածքներով ավտոմեքենայի, առկա ապրանքային վիճակի մնացորդային գինը՝ արժեքային արտահայտությամբ /որպես որոշակի սպառման շուկա ունեցող պիտանի մնացած պահեստամասեր/, 2013թ. փետրվարի 09-ի դրությամբ գործող շուկայական գներով կարող էր կազմել 270.400 դրամ:
4 և 5./ Նման վնասվածքներով ավտոմեքենայի՝ վերականգնումը տվյալ դեպքում ապրանքագիտական տեսանկյունից նպատակահարմար չէ, քանի որ ավտոմեքենայի թափքի առաջնամասի, աջ կողային մասի, տանիքի և հատակի պանելների, առջևի և հետևի կախոցների, լրակազմող հանգույցների և դետալների էական մասը վնասվել են անվերականգնելիության աստիճանի և անհրաժեշտ է թափքի փոխարինում: Նման վերականգնման գինը չի կարող գնահատվել որպես ավտոմեքենայի /գույքի/ պատճառված նյութական վնասի չափանիշ, քանի որ մեքենայի նման էական վնասվածքների պայմաններում, դրա վերականգնման ընդհանուր գինը կարող է էական մաս կազմի կամ մոտենալ, կամ էլ գերազանցել ավտոմեքենայի մինչև վնասվելը ունեցած շուկայական գնի նկատմամբ, որը կբերի ապրանքային վիճակի փոփոխության և չի ելնի նշված վիճակից: Ուստի և որքան գումար կկազմեն Գազ 31105-120 մակնիշի 04 SO 045 պետահամարանիշի ավտոմեքենայի վերանորոգման հետ կապված անհրաժեշտ ծախսերը մինչև պատահարի պահը ավտոմեքենայի առկա փաստացի վիճակը վերականգնելու համար հաշվարկման ենթակա չէ:
11. Փորձագետ Ս.Միսակյանի դատարանում տված բացատրությամբ այն մասին, որ իր կողմից փորձաքննությունն իրականացվել է 2015թ. փետրվարի 21-ին, Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մատնիշյան 157 հասցեում գտնվող ավտոտնակում, որտեղ իրեն է ներկայացվել Գազ 31105-120 մակնիշի վթարված ավտոմեքենան: Իր կողմից ակնադիտական հետազոտության է ենթարկվել ավտոմեքենան, կցվել են շուրջ 48 լուսանկարներ: Իրեն առաջադրված է եղել 5 հարց, որից 4-ի վերաբերյալ տրվել է եզրակացություն, իսկ այն հարցադրմանը, թե որքան գումար կկազմի ավտոմեքենայի վերանորոգման հետ կապված անհրաժեշտ ծախսերը, այդ հարցին չի պատասխանել, քանի որ ավտոմեքենան ամբողջությամբ վնասված է եղել, իսկ նմանատիպ վնասվածքներով մեքենան վերականգնման ենթակա չէ: Եվ այդ մեկնաբանությունից ելնելով, իր կողմից կիրառվել է մնացորդային մեթոդը: Մնացորդային մեթոդում հստակ նշված է բոլոր թվերը, հետևություններում առանձին-առանձին նշվել է մինչ վնասվելը մեքենայի ունեցած գինը, մնացորդային շուկայական գինը արժեքային արտահայտությամբ՝ 2013թ. փետրվարի 9-ի դրությամբ, և ավտոմեքենայի մինչ վնասվելը ունեցած գնի, և մնացորդային գնի տարբերությունից ելնելով որոշվել է պատճառված նյութական վնասը: Մնացորդային գինը որոշելու համար իրենք ունեն տեղեկատու ինֆորմացիոն բազա յուրաքանչյուր տարվա համար նմանատիպ մեքենաների գների վերաբերյալ: Եթե այդ օրվա դրությամբ ինֆորմացիա չկա, ապա համեմատական մեթոդի կիրառմամբ են կազմում եզրակացությունը: «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությանը ծանոթ է գործի նյութերից: Ինքը չի կարող պատասխանել այն հարցին, թե երկու եզրակացությունների միջև առկա մոտ 30.000 ՀՀ դրամի տարբերությունը էական է, թե ոչ, քանի որ այդ փորձագետների իրավասության սահմանների մեջ չի մտնում: Ցանկացած եզրակացության մեջ կարող են առաջանալ մասնագիտական հիմունքներից ելնելով տարբերություններ, ընդունելի է, որ այդ տարբերությունը կարող է լինել մինչև 15-20 տոկոս, բայց ոչ սույն դեպքում: Կենկրետ այդ դեպքի համար չի կարող մինչև 20 տոկոս տարբերություն լինել: Թե ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման հաշվետվության մեջ, թե «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության մեջ սխալ է նշված մեքենայի հաշվիչի ցուցիչը: Իր կողմից կատարված 4-րդ լուսանկարում նշված է հաշվիչի ցուցիչը, թեև այն էական ազդեցություն չի կարող ունենալ վնասի չափը որոշելու համար: Գույքի վնասի չափն արժեքային արտահայտությամբ տրվել է դեպքի օրվա՝ 09.02.2013թ. դրությամբ գործող շուկայական գներով: Մնացորդային արժեքի հաշվարկը տրված է աղյուսակ 1-ում: Փորձագետը պարտավոր է անձամբ զննել ավտոմեքենան, հետազոտել, մանրամասն ուսումնասիրել նոր միայն եզրակացություն տալ: Գույքին պատճառված վնասի չափը արժեքային արտահայտությամբ պետք է տրվի դեպքի օրվա դրությամբ: Ինքը պնդում է իր կողմից տրված եզրակացությունը:
12. Համաձայն՝ «Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊԸ-ի /պատվիրատու/ և «Հովսեփյան և գործընկերներ /կատարող/ միջև 12.12.2014թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման թիվ 026-14Փ պայմանագրի՝ կատարողը պարտավորվում է իրականացնել պատվիրատուի շահերի պաշտպանությունը..., կատարողին վճարման

ենթակա ծառայության վճարը կազմում է 150.000 ՀՀ դրամ:
13. Համաձայն՝ Մկրտիչ Փահլևանյանի /պատվիրատու/ և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Արա Սարգսյանի /կատարող/ միջև 22.10.2013թ. կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի՝ կատարողը պատվիրատուին մատուցում է իրավաբանական ծառայություններ..., ծառայությունների մատուցման գինը սահմանվում է 150.000 ՀՀ դրամ:
14.Համաձայն՝ «Լեգալ Քնսալթինգ Թոքնոլոջիզ» ՍՊԸ-ի /կատարող/ և Ռազմիկ Խաչատրյանի /պատվիրատու/ միջև 11.10.2013թ. կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 14-2013 պայմանագրի՝ կատարողը պատվիրատուին իր աշխատակիցների միջոցով մատուցում է իրավաբանական ծառայություններ..., ծառայությունների մատուցման գինը սահմանվում է 200.000 ՀՀ դրամ:

2. Կիրառելի իրավունքները.
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 983-րդ, 1058-րդ, 1066-րդ հոդված, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր, 8, 16, 21, 34 հոդվածներ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդված, 73-րդ հոդվածի 1-ին մաս, «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի և մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» RL 1-013 կանոններ, «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողին պատկանող գույքի ոչնչացման /80% և ավելի վնասի/ դեպքում գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանության» RL 1-015 կանոններ

3. Դատարանի պատճառաբանությունները և իրավական վերլուծությունները.
Ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, լսելով կողմերի ներկայացուցիչների ցուցմունքները, հետազոտելով ապացույցները, գնահատելով դրանք՝ դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի համաձայն՝ 1. Ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:
2. Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ապահովագրություն:
Կամավոր ապահովագրությունն ապահովադրի կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրությունն է:
Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են սույն օրենսգրքով, ,Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:
Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են սույն օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:
«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրված է. սույն օրենքի համաձայն՝ պարտադիր ապահովագրման ենթակա է օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող և (կամ) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարվող ավտոտրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործումից բխող պատասխանատվությունը, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Սույն օրենքի համաձայն՝ հատուցման ենթակա են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած վնասները:
Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվորը 21.01.2013թ. «Ռոսգոսստրախ» ԱՓԲԸ-ի հետ կնքել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող

պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր, ըստ որի 21.01.2013 թվականից մինչև 21.01.2014 թվականն ընկած ժամանակահատվածի համար ապահովագրվել է «Գազ-31105» մակնիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Պայմանագրի 8-րդ կետի համաձայն գույքին պատճառված վնասների համար սահմանվել է 1.800.000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար /հիմք SG 0547958 վկայագիրը/:
Հիմնավորվեց նաև, որ 2013 թվականի հունվարի 9-ին «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի և Ռազմիկ Խաչատրյանի միջև կնքվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» թիվ SH468362 պայմանագիրը (կազմված է ապահովագրական վկայագրից և ԱՊՊԱ պայմաններից): Պայմանագրով սահմանվել է, որ ապահովագրվում է ապահովադիր Ռազմիկ Խաչատրյանի կողմից իրեն պատկանող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի ավտոմեքենայի (19OS057 հաշվառման համարանիշ, 1986 թվականի արտադրության, ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայական SA057866՝ տրված 99001-ի կողմից 2009 թվականի նոյեմբերի 16-ին) օգտագործումից բխող պատասխանատվությունը՝ անձնական և գույքային վնասներից: Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ գույքին պատճառված վնասների համար ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի ապահովագրական գումարը կազմում է 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:
Սույն գործի փաստերի համաձայն 09.02.2013թ. ժամը 09:00-ի սահմաններում, Երևան-Գյումրի ավտոճանապարհի 70-րդ կմ հատվածի՝ դեպի Երևան տանող ուղեմասում միմյանց են բախվել Ռազմիկ Խաչատրյանի վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի, Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի և Անդրանիկ Արտոյանի վարած «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենաները: Դեպքի կապակցությամբ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզի քննչական բաժնում նախապատրաստվել է նյութեր, և նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն: Նյութերի նախապատրաստմամբ պարզվել և հիմնավորվել է, որ Ռազմիկ Խաչատրյանը իր վարած «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայով երթևեկելիս, թույլ է տվել ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, որի հետևանքով դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և ընդհարվել է հանդիպակաց երթևեկող Մկրտիչ Փահլևանյանի վարած «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն: Վթարից հետո նույն պահին Գյումրիի կողմից դեպի Երևանի ուղղությամբ երթևեկող Անդրանիկ Արտոյանը, իր վարած .Mitsubishiե մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայով, չունենալով վթարը կանխելու տեխնիկական հնարավորություն, բախվել է ճանապարհի՝ դեպի Երևան տանող ուղեմասում գտնվող «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենային: Համաձայն դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 06051308 եզրակացության՝ առաջադրված պայմաններում «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդ Ռազմիկ Խաչատրյանը, թույլ տալով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՃԵԿ-ի 65-րդ և 66-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, դրանով իսկ պայմանավորել է Դեպքի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից: Դատաավտոտեխնիկական փորձաքննության թիվ 06051308 եզրակացության համաձայն՝ առաջադրված պայմաններում «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի և «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդները «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարումը /Դեպքը/ կանխելու տխնիկական հնարավորություն չեն ունեցել և նրանց կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որոնք, տեխնիկական տեսակետից հակասելով ՃԵԿ-ի պահանջներին, պայմանավորած լինեին «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարման առաջացումը /Դեպքի առաջացումը/, չեն դիտվում: Իսկ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի և «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդների կողմից ՃԵԿ-ի 65-րդ կետին հակասող գործուղությունների կատարումը պատճառական կապի մեջ չի գտնվում «ԶԻԼ ՄՄԶ 45021» մակնիշի 19 OS 057 հ/հ-ի ավտոմեքենայի հետ ընդհարման /Դեպքի/ առաջացման հետ: Հիմք ընդունելով վերոնշվածը 01.03.2013թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզի քննչական բաժնի Թալինի քննչական խմբի քննիչ Վ.Մարտիրոսյանը քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացրել:
Համաձայն ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/856

հաշվետվության՝ Դեպքի արդյունքում «Mitsubishi» մակնիշի 22 OL 611 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.444.000 ՀՀ դրամ: Համաձայն ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման թիվ Ա/764 հաշվետվության՝ Դեպքի արդյունքում «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմում է 1.138.000 ՀՀ դրամ: «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ը, հիմք ընդունելով «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի սեփականատեր Մկրտիչ Փահլևանյանի կողմից ներկայացված կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմումը, 07.05.2013թ. նշանակել է կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից որակավորված «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ին: «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացված կրկնակի փորձաքննության արդյունքում տրված թիվ Հ 054 եզրակացության համաձայն՝ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենայի գինը արժեքային արտահայտությամբ կարող է կազմել 1.500.000 ՀՀ դրամ, նշված վնասվածքներով ավտոմեքենայի գինը՝ արժեքային արտահայտությամբ կարող է կազմել 304.500 ՀՀ դրամ, վերոնշյալ վնասվածքների հետևանքով ավտոմեքենային պատճառված վնասի չափն ածեքային արտահայտությամբ գնահատում անցկացնելու ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել 1.195.500 ՀՀ դրամ /1.500.000-304.500/:
Հաշվի առնելով ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացությունը և 01.03.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, և նաև, այն, որ դեպքի հետևանքով գույքին պատճառված վնասներ են կրել երկու անձինք, և պետք է տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարել վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանված ապահովագրական գումարի սահմաններում, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից կայացվել են ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH 31023 A 1 և թիվ SH 31023 A 2 որոշումները, որոնցով հատուցվել են տուժողներ Մկրտիչ Փահլևանյանին պատճառված վնասը՝ 815.268 ՀՀ դրամի չափով, և Անդրանիկ Արտոյանին պատճառված վնասը՝ 984.732 ՀՀ դրամի չափով:
Հայցվորը դիմելով դատարան և հայցապահանջի հիմքում դնելով, այն հանգամանքը, որ «Պ.Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ Ա-115 եզրակացության համաձայն՝ «ԳԱԶ 3110» մակնիշի 04 SO 045 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի չափը կազմել է 1.938.000 ՀՀ դրամ, խնդրել է «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ փորձագետ Դ.Ռսյանի կողմից կատարված Հ 054 կրկնակի փորձաքննության արդյունքները անվավեր ճանաչել, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ 01.06.2013թ. SH 31023-A2 որոշումը մասնակի՝ Հայցվորին պատճառված վնասի չափի մասով անվավեր ճանաչել, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին ապահովագրավճարի հաշվարկը ավտոմեքենային պատճառված իրական վնասի՝ 1.938.000 ՀՀ դրամի համամասնությամբ կատարելուն պարտավորեցնել:
Դատարանի 21.03.2014թ. որոշմամբ նշանակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն՝:
Համաձայն «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 07.04.2015թ. տրված թիվ 52171410 եզրակացության՝
1. Փորձաքննությանը տրամադրված վիճակում <GAZ-31105-120> մակնիշի, X9631105061318608 նույնացման (VIN)–ի համարով ավտոմեքենայի մինչվնասվածքային շուկայական գինը, արժեքային արտահայտությամբ, 2013թ. փետրվարի 09-ի դրությամբ գործող շուկայական գներով, կարող էր կազմել 1.500.000 դրամ:
2. <GAZ-31105-120> մակնիշի, X9631105061318608 նույնացման (VIN)–ի համարով ավտոմեքենայի վնասվածքների հետևանքով, այդ ավտոմեքենայի /գույքի/ վնասի չափն արժեքային արտահայտությամբ, 2013թ. փետրվարի 09-ի դրությամբ գործող շուկայական գներով կարող էր կազմել 1.229.600 դրամ:
3. Վերոնշված <GAZ-31105-120> մակնիշի, X9631105061318608 նույնացման (VIN)–ի համարով վնասվածքներով ավտոմեքենայի, առկա ապրանքային վիճակի մնացորդային գինը՝ արժեքային արտահայտությամբ /որպես որոշակի սպառման շուկա ունեցող պիտանի մնացած պահեստամասեր/, 2013թ. փետրվարի 09-ի դրությամբ գործող շուկայական գներով կարող էր կազմել 270.400 դրամ:
4 և 5./ Նման վնասվածքներով ավտոմեքենայի՝ վերականգնումը տվյալ դեպքում ապրանքագիտական տեսանկյունից նպատակահարմար չէ, քանի որ ավտոմեքենայի թափքի առաջնամասի, աջ կողային մասի, տանիքի և հատակի պանելների, առջևի և հետևի կախոցների, լրակազմող հանգույցների և դետալների էական մասը վնասվել են անվերականգնելիության աստիճանի և անհրաժեշտ է թափքի փոխարինում: Նման

վերականգնման գինը չի կարող գնահատվել որպես ավտոմեքենայի /գույքի/ պատճառված նյութական վնասի չափանիշ, քանի որ մեքենայի նման էական վնասվածքների պայմաններում, դրա վերականգնման ընդհանուր գինը կարող է էական մաս կազմեի կամ մոտենալ, կամ էլ գերազանցել ավտոմեքենայի մինչև վնասվելը ունեցած շուկայական գնի նկատմամբ, որը կբերի ապրանքային վիճակի փոփոխության և չի ելնի նշված վիճակից: Ուստի և որքան գումար կկազմեն Գազ 31105-120 մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենայի վերանորոգման հետ կապված անհրաժեշտ ծախսերը մինչև պատահարի պահը ավտոմեքենայի առկա փաստացի վիճակը վերականգնելու համար հաշվարկման ենթակա չէ:

Վկայակոչելով նշված փորձաքննության եզրակացությունը, հայցվորի ներկայացուցիչը հստակեցրել է պահանջը, և խնդրել է թիվ Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացությամբ ամրագրված արդյունքները մասնակի ճանաչել անարժանահավատ և անհիմն, կամ անվավեր, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն 01.06.2013թ. SH 31023-A2 որոշումը մասնակի ճանաչել անվավեր և /կամ «Ինգո Արմենենիա» ԱՓԲԸ-ին պարտավորեցնել ապահովագրական պատահարի հետևանքով «Գազ 31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենայի մինչ պատահարը գնահատված և մնացորդային արժեքների տարբերության՝ 1.229.000 ՀՀ դրամ համամասնության չափով հատուցել Մկրտիչ Փահլևանյանին վճարման ենթակա գումարը: Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել պատճառած վնասի փաստացի չափի և ապահովագրական հատուցման միջև եղած տարբերությունը՝ 401.772 ՀՀ դրամ: Պատասխանողներ «Ինգո Արմենենիա» ԱՓԲԸ-ի և Ռազմիկ Խաչատրյանի կողմից վնասի հատուցման չվճարված գումարների նկատմամբ 2013թ. հունիսի 1-ից հաշվեգրել տոկոսներ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների չափով՝ մինչև գումարները վճարելու օրը և այն բռնագանձել հօգուտ հայցվոր Մկրտիչ Փահլևանյանի, հօգուտ վերջինիս, իր կողմից խախտված իրավունքները վերականգնելու համար կատարած ծախսերը՝ կրկնակի փորձաքննության, Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԴ ՍՊԸ-ին արդեն իսկ վճարված և հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումարները, գանձել պատասխանողներից:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն.

1. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Բյուրոյի որակավորած փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) կողմից, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, որոնց համար Բյուրոյի կանոններով կարող է նախատեսվել ապահովագրական ընկերության կողմից մեղավորության որոշման և (կամ) վնասի չափի գնահատման պարզեցված կարգ:

3. Փորձաքննությունն իրականացնելիս և գույքին պատճառված վնասները գնահատելիս փորձագետը պարտավոր է ղեկավարվել օրենքով, այլ իրավական ակտերով, ներառյալ՝ Բյուրոյի խորհրդի՝ սույն օրենքի հիման վրա ընդունած՝ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների գնահատման և փորձաքննության կարգով ու մեթոդաբանությամբ:

Սույն նորմի վերլուծությունից հետևում է, որ ԱՊՊԱ ոլորտում տուժողի գույքին պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումն իրականացվում է հետևյալ պայմանների պահպանմամբ՝

1. պատճառված վնասի չափը կարող է որոշվել միայն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից որակավորված փորձագետի եզրակացությամբ և

2. պատճառված վնասի գնահատմանն ուղղված փորձաքննությունը պետք է իրականացվի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից սահմանված կարգով և մեթոդաբանությանը համապատասխան:

Համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ 1. Տուժողի ավտոտրանսպորտային միջոցի վնասվածքի վերականգնման հետևանքով առաջացած ծախսեր են համարվում ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման հետ կապված ծախսերը, որոնք անհրաժեշտ են այդ ավտոտրանսպորտային միջոցի՝ մինչև պատահարի պահը առկա փաստացի վիճակը

վերականգնելու համար: Ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման արդյունքում դրա շուկայական արժեքի նվազեցման հետևանքով առաջացած գումարային տարբերությունը սույն օրենքի համաձայն ենթակա չէ հատուցման:
2. Տուժողի ավտոտրանսպորտային միջոցը համարվում է ոչնչացված, եթե դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին է կամ տնտեսապես չհիմնավորված (վերանորոգման ծախսերը կգերազանցեն նախքան պատահարը ավտոտրանսպորտային միջոցի արժեքի 80 տոկոսը): Տուժողի ավտոտրանսպորտային միջոցի ոչնչացման դեպքում ապահովագրական գումարի սահմաններում հատուցվում է մինչև դրա ոչնչացման պահը գնահատված արժեքի և Բյուրոյի խորհրդի սահմանած կարգով հաշվարկված՝ դրա մնացորդային արժեքների տարբերությունը:
ԱՊՊԱ ոլորտում փորձաննությունների իրականացման կարգը և մեթոդաբանությունը սահմանված են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից ընդունված կանոններով:
Մասնավորապես Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների գնահատման և փորձաքննության կարգի և մեթոդաբանության, փորձագետների որակավորման կարգի, չափանիշների ու պայմանների և որակավորումից զրկման կարգի ու հիմքերի» RL 1-013 և «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով տուժողին պատկանող գույքի ոչնչացման /80% և ավելի վնասի/ դեպքում գույքի մնացորդային արժեքների հաշվարկման մեթոդաբանության» RL 1-015 կանոններով:
Նշված իրավական ակտերով տրված իրավակարգավորումը հանգում է նրան, որ գույքի ոչնչացման, այսինքն՝ դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին կամ տնտեսապես չհիմնավորված /վերանորոգման ծախսերը կգերազանցեն նախքան պատահարը գույքի արժեքի 80 տոկոսը/ լինելու դեպքում գույքին պատճառված վնասը որոշվում է մնացորդային արժեքների հաշվարկի հիման վրա: Այսինքն՝ տուժողի ավտոտրանսպորտային միջոցի ոչնչացման դեպքում ապահովագրական գումարի սահմաններում հատուցվում է մինչև դրա ոչնչացման պահը գնահատված արժեքի և Բյուրոյի խորհրդի սահմանած կարգով հաշվարկված՝ դրա մնացորդային արժեքների տարբերությունը:
Նույն կանոնների 21.1-րդ կետի համաձայն՝ փորձագետը վնասված գույքի փորձաքննության համար զննությունն իրականացնում է ձև 9-ով սահմանված ձևի զննության ակտ կազմելու միջոցով: Զննության ակտի անբաժանելի մաս են համարվում վնասված գույքի ընդհանուր համակողմանի գունավոր ֆոտոլուսանկարները, ինչպես նաև զննության ակտում որպես վնասված նշված բոլոր դետալների կամ հանգույցների ֆոտոլուսանկարները, որոնք հնարավոր է լուսանկարել...:
Համաձայն «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի կրկնակի փորձաքննության թիվ Հ 054 եզրակացության՝ գնահատման գործընթացը բաղկացած է եղել հետևյալ փուլերից՝ վթարի ենթարկված ավտոմեքենայի մասնագիտական տեսողական զննում, անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրում մասնագետների հետ, հարցազրույցների միջոցով ավտոպահեստամասերի շուկայի ուսումնասիրում, գնահատմանը ներկայացված ավտոմեքենայի փաստաթղթերի ուսումնասիրում, գնահատմանն անհրաժեշտ մեթոդների կիրառում և եզրակացության կազմում: Մինչդեռ, փորձաքննության իրականացրած փորձագետ Դ.Ռսյանը նախնական դատական նիստում տված բացատրությամբ ընդունեց, այն փաստը, որ վթարված ավտոմեքենան անձամբ չի տեսել, չի զննել, վնասված գույքի փորձաքննության համար Ձև 9-ով սահմանված ձևի զննության ակտ չի կազմել, չի լուսանկարահանել: Վթարված ավտոմեքենան լուսանկարվել է մեկ այլ անձի կողմից, և նկարները փոխանցվել է իրեն:
Ըստ Փորձագետի, ավտոմեքենայի ... վազքն զննության պահին՝17.05.2013թ. կազմել էր 251.719 կմ:
Փորձագետը թեև նշել է, որ վերոհիշյալ վնասվածքներով ավտոմեքենայի վնասի չափն արժեքային արտահայտությամբ, որոշվում է ավտոմեքենայի մինչև վնասվելն ունեցած գնի և առկա՝ վթարված վիճակում/ որպես պիտանի մնացած պահեստամասեր/ ունեցած գների տարբերությամբ՝ նկատի ունենալով ավտոմեքենայի տեխնիկական վիճակը, մաշվածությունը, ինչպես նաև մինչվթարային ապրանքային վիճակը, սակայն ավտոմեքենային պատճառված վնասի չափը արժեքային արտահայտությամբ տրվել է, ոչ թե դեպքի օրվա՝ 09.02.2013 թվականի դրությամբ, այլ 17.05.2013 թվականի դրությամբ:
Այսպիսով, դատարանն արձանագրում է, որ փորձագետի կողմից թիվ Հ 054 կրկնակի փորձաքննությունը կատարվել է Բյուրոյի վերը նշված կանոնների խախտմամբ, որպիսի հանգամանքն էլ հիմք է «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ փորձագետ Դ.Ռսյանի կողմից կատարված Հ 054 կրկնակի փորձաքննության արդյունքները մասնակի անվավեր ճանաչելու, որպես հետևանք «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ 01.06.2013թ. SH 31023-A2

որոշումը մասնակի՝՝ Հայցվորին պատճառված վնասի չափի մասով անվավեր ճանաչելու համար: Դատարանը որպես հայցվորին պատճառված վնասի չափ, հիմք է ընդունում դատարանի որոշմամբ նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությամբ տրված վնասի չափը, ըստ որի այն կազմում է 1.229.600 ՀՀ դրամ, որպիսի հանգամանքն էլ հիմք է հայցապահանջը՝ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին ապահովագրական պատահարի հետևանքով «Գազ 31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենայի մինչ պատահարը գնահատված և մնացորդային արժեքների տարբերության՝ 1.229.000 ՀՀ դրամ, համամասնության չափով Մկրտիչ Փահլևանյանին պատճառված վնասը հատուցելուն պարտավորեցնելու մասով, պահանջը բավարարելու համար:

Դատարանն անդրադառնալով հայցվորի՝՝ պատասխանող Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ իրեն պատճառած վնասի փաստացի չափի և ապահովագրական հատուցման միջև եղած տարբերությունը՝401.772 ՀՀ դրամի չափով բռնագանձելու մասով պահանջին, գտնում է, որ այն նույնպես հիմնավոր է, և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն.

1. ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը մեկ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված մեկ ապահովագրական պատահարի համար չպետք է պակաս լինի...՝

2) գույքին պատճառված վնասների համար՝ 1 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ գումարից՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի: Եթե սույն օրենքի համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

2. Եթե սույն օրենքի համաձայն՝ հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված անձնական վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Սույն մասի համաձայն հաշվարկված՝ յուրաքանչյուր տուժողին վճարման ենթակա գումարը չի կարող գերազանցել ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը: Այն դեպքում, երբ տուժողներից մեկի (մի քանիսի) համար, սույն մասի համաձայն, համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս տուժողներին պատճառված վնասները այդ վնասներին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

6. Տուժողի փաստացի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար լինելու դեպքում ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը հատուցում է վնաս պատճառողը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1066-րդ հոդվածի համաձայն: Տուժողի փաստացի կրած այն վնասները, որոնք հատուցման ենթակա չեն ԱՊՊԱ պայմանագրով (Բյուրոյի կողմից), հատուցում է վնաս պատճառողը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1066 հոդվածի համաձայն՝ Կամավոր կամ պարտադիր ապահովագրության կարգով հօգուտ տուժողի իր պատասխանատվությունն ապահովագրած քաղաքացին կամ իրավաբանական անձը, այն դեպքում, երբ պատճառված վնասը լրիվ հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար է, հատուցում է ապահովագրական հատուցման և վնասի փաստացի չափի միջև եղած տարբերությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի համաձայն՝

1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի համաձայն՝
1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:
Հիմք ընդունելով վերը նշված իրավանորմերը, և նկատի ունենալով, որ հայցվորի կրած վնասները հատուցելու համար ապահովագրական հատուցումն անբավարար է, դատարանը գտնում է, որ պատասխանող Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 401.772 ՀՀ դրամ, հետևյալ հիմնավորմամբ.
Սույն գործի փաստերի համաձայն պատահարի հետևանքով պատճառված ընդհանուր վնասը կազմում է 2.673.600 ՀՀ դրամ, որից 1.229.600 ՀՀ դրամը՝ Մ.Փահլևանյանի վարած ավտոմեքանային պատճառված վնասի չափն է, իսկ 1.444.000 ՀՀ դրամը՝ Ա. Արտոյանի վարած ավտոմեքանային պատճառված վնասի չափն է:
Նշված վնասների համամասնությամբ, ԱՓԲԸ կողմից ապահովագրական 1.800.000 ՀՀ դրամ գումարից Հայցվորին հատուցման ենթակա գումարը կկազմի՝ /1.229.600:2.673.600*1.800.000=827.828/ 827.828ՀՀ դրամ, հետևաբար Պատասխանող Ռազմիկ Խաչատրյանը պետք է Հայցվորին հատուցի նրան պատճառած վնասի փաստացի չափի և ապահովագրական հատուցման միջև եղած տարբերությունը /1.229.600 -827.828 = 401.772/, այն է 401.772 ՀՀ դրամ:
Ինչ վերաբերվում է պատասխանող Ռազմիկ Խաչատրյանի ներկայացուցչի առարկությանն այն մասին, Պատասխանողի կողմից վարած ավտոմեքենան Հայցվորին պատկանող «ԳԱԶ 31105-120» մակնիշի ավտոմեքենայի հետ վթարի ենթարկվելուց հետո որոշակի ժամանակ անց է վթարի ենթարկվել «MITSUBISHI SHARIOT GRANDIS 2.4 CDI» մակնիշի 22ՕԼ611 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետ, այսինքն՝ առաջին ապահովագրական պատահարը տեղի ունենալուց և ավարտվելուց հետո տեղի է ունեցել մեկ այլ ապահովագրական պատահար, և, որ ապահովագրական ընկերության կողմից հատուցում իրականացնելիս պետք է հիմք ընդունվեր երկու ինքնուրույն դեպքերի առկայության փաստը, այլ ոչ թե արհեստականորեր դրանք ընդհանրացվեին մեկ դեպքի կազմում և հատացումն իրականացվեր Պատասխանողի ավտոմեքենայի հետ բախված երկու ավտոմեքենաների միջև մեկ ապահովագրական դեպքի համար նախատեսված գումարը բաշխելու միջոցով, ապա նշվածը Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ հայցվորի գումար բռնագանձելու պահանջը մերժելու հիմք հանդիսանալ չի կարող հետևյալ պատճառաբանությամբ:
Ինչպես ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացությամբ, այնպես էլ 01.03.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ 09.02.2013թ. Ռազմիկ Խաչատրյանի վարած, Մկրտիչ Փահլևանյանի վարած, և Անդրանիկ Արտոյանի վարած ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի ունեցեծ ճանապարհատրանսպորտային պատահարը դիտարկվել է, որպես մեկ ճանապարհատրանսպորտային պատահար:
Համաձայն ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 22.02.2013թ. տրված թիվ 06051308 եզրակացության՝ տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը պայմանավորված է եղել Զիլ ՄՄԶ 45 021 մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ռազմիկ Խաչատրյանի կողմից թույլ տրված ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններ կատարելով, իսկ Մկրտիչ Փահլևանյանի և Անդրանիկ Արտոյանի կողմից թույլ տրված խախտումները տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի հետ պատճառական կապի մեջ չեն գտնվել:
ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունը չի վիճարկվել պատասխանող Ռազմիկ Խաչատրյանի կողմից: Վերջինիս կողմից չի վիճարկվել նաև 01.03.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, որում նույնպես նշված ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարը դիտարկվել է, որպես մեկ ապահովագրական պատահար:
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից կայացված ԱՊՊԱ ոլորտում վնասի հատուցման վերաբերյալ թիվ SH 31023 A 1 և թիվ SH 31023 A 2 որոշումներով ևս Ռազմիկ Խաչատրյանի վարած Զիլ ՄՄԶ 45 021 մակնիշի, Մկրտիչ Փահլևանյանի վարած Գազ 3110 մակնիշի, և Անդրանիկ Արտոյանի վարած Mitsubishi ավտոմեքենաների մասնակցությամբ 09.02.2013թ. տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարը, դիտարկվել է

որպես մեկ ապահովագրական պատահար:
Նշված որոշումները նույնպես չեն վիճարկվել Ռազմիկ Խաչատրյանի կողմից:
Հետևաբար դրանց հիմքում ընկած, և դրանցով հաստատված փաստական հանգամանքները պետք է դիտել, որպես պատասխանողի կողմից ընդունված փաստեր:
Ինչ վերաբերվում է՝ վնասի հատուցման չվճարված գումարների նկատմամբ 2013թ. հունիսի 1-ից տոկոսներ հաշվեգրելու հայցվորի պահանջին, ապա այն ենթակա է մերժման նկատի ունենալով, որ հայցվորի կողմից գումար վճարելու որևէ պահանջ պատասխանող Ռազմիկ Խաչատրյանին չի ներկայացվել, ներկայացված սկզբնական հայցապահանջով հայցվորը Ռազմիկ Խաչատրյանին ներգրավվել է որպես երրորդ անձ, և միայն գործի քննության ընթացքում՝ դատարանի կողմից նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո է խնդրել դատարանին նրան ներգրավել որպես պատասխանող, և միայն եզրակացությունը ստանալուց հետո է հստակեցրել, թե որքան է կազմում իր պահանջի չափը: Ուստի դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածը կիրառելի չէ:
Դատարանը գտնում է, որ անհիմն է, և ենթակա է մերժման նաև հայցվորի՝ որպես դատական ծախս Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԴ ՍՊԸ-ին վճարված գումարի բռնագանձման պահանջը, նկատի ունենալով, որ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Բյուրոյի որակավորած փորձագետների կողմից:
Համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի՝ Բյուրոյի խորհուրդը որակավորում է փորձագետներին, սահմանում է փորձագետների որակավորման կարգը, չափանիշներն ու պայմանները, փորձաքննության կարգն ու մեթոդաբանությունը: «Պ. Ա. Գ. ԷՍԹԵՅԹԵ ԱՊՆ-ն չունի Բյուրոյի կողմից տրված որակավորում, «Պ. Ա. Գ. ԷՍԹԵՅԹԵ ԱՊՆ-ն փորձաքննությունը չի իրականացրել Բյուրոյի կողմից սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: Օրենքը և ապահովագրի (վնաս պատճառողի) հետ կնքած ԱՊՊԱ պայմանագիրը սահմանում է ապահովագրական ընկերության պարտավորությունը՝ հատուցում վճարել որոշակի կարգով և մեթոդաբանությամբ իրականացված փորձաքննության արդյունքների հիման վրա, ուստի դատարանը գտնում է, որ ապահովագրական ընկերությունն այլ կարգով և մեթոդաբանությամբ իրականացված փորձաքննության կատարման համար, չպետք է հատուցում վճարի:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածի համաձայն դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափով:
Գործի քննությամբ հիմնավորվեց, որ Մկրտիչ Փահլևանյանի /պատվիրատու/ և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Արա Սարգսյանի /կատարող/ միջև 22.10.2013թ. կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, ըստ որի՝ կատարողը պատվիրատուին մատուցել է իրավաբանական ծառայություններ…, ծառայությունների մատուցման գինը սահմանվել է 150.000 ՀՀ դրամ:
Այսպիսով, դատարանը փաստում է, որ հայցվորն իր խախտված իրավունքները վերականգնելու համար կատարել է ծախսեր՝ դիմել է փաստաբանի և կողմերի միջև կնքված պայմանագրով ծառայությունների արժեքը կազմել է 150 000 ՀՀ դրամ, հետևաբար դատարանը գտնում է, որ «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 150.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի վարձատրության գումար:
Սույն գործի փաստերի համաձայն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի՝ 07.05.2013թ. թիվ Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացություն իրականացնելու համար հայցվորի կողմից «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին, որպես կրկնակի փորձաքննության կանխավճար վճարվել է 25.000 ՀՀ դրամ, հետևաբար դատարանը գտնում է, որ «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ից հօգուտ

հայցվորի պետք է բռնագանձել նաև վճարված 25.000 ՀՀ դրամը:
Դատարանը միաժամանակ նկատի ունենալով, որ նշանակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին, նշված կազմակերպության տնօրեն ժ/պ-ն խնդրել է որպես փորձաքննության ծախս բռնագանձել 54.000 ՀՀ դրամ, հայցը բավարարվել է մասնակի, դատարանը գտնում է, որ պետք է «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ից հօգուտ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի բռնագանձել 54.000 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման ծախս:
Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցապահանջը բավարարվել է մասնակի, դատարանը գտնում է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 1-ին կետի, հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել նաև բավարարված հայցապահանջին համապատասխան հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:
Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ, 131-րդ և 134-րդ հոդվածներով, դատարանը

ՎՃՌԵՑ

1. Հայցը բավարարել մասնակի:
Մասնակի անվավեր ճանաչել «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ի կողմից կատարված թիվ Հ 054 կրկնակի փորձաքննության եզրակացությունը և որպես հետևանք, մասնակի՝ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ 01.06.2013թ. թիվ SH 31023-A2 որոշումը՝ Մկրտիչ Փահլևանյանին՝ պատճառված վնասի չափի մասով ճանաչել անվավեր:
Պարտավորեցնել «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին ապահովագրական պատահարի հետևանքով «Գազ 31105» մակնիշի 04 SO 045 պետհամարանիշի ավտոմեքենայի մինչ պատահարը գնահատված և մնացորդային արժեքների տարբերության՝ 1.229.000 ՀՀ դրամ համամասնության չափով պատճառված վնասը հատուցել Մկրտիչ Փահլևանյանին:
2. Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել 401.772 ՀՀ դրամ, որպես պատճառված վնասի փոխհատուցում:
3. «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել 25.000 ՀՀ դրամ՝ կրկնակի փորձաքննության կատարման համար կատարված ծախսը:
4. «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանի վարձատրության գումար:
5.«ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊԸ-ից հօգուտ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի բռնագանձել 54.000 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման ծախս:
6. Ռազմիկ Խաչատրյանից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել 8,036 ՀՀ դրամ, որպես բավարարված հայցապահանջին համապատասխան հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:
7. .«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ից հօգուտ Մկրտիչ Փահլևանյանի բռնագանձել 252 ՀՀ դրամ, որպես բավարարված հայցապահանջին համապատասխան հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:
Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:
Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:	02-05-2016
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0

Այլ նշումներ:

Գործը, Որոշումը հանձնվել է գրասենյակ

Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	07-06-2016
Էջերի քանակը:	1-ին հատոր 262 էջ, 2-րդ հատոր 102 էջ, 3-րդ հատոր 1103 էջ